



Ժողովրդավարության  
գարգացման  
հիմնադրամ

«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ  
ԼԱՎԱՐԿՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ»

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2025թ.

**«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԼԱՎԱՐԿՄԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ»  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

**Փորձագետներ**

Դավիթ Գյուրջյան

Հայկ Մարտիրոսյան

*Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական օժանդակության շնորհիվ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակում: Հետազոտության մեջ տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակների տեսակետը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի դիրքորոշումների ու տեսակետների հետ:*

- 2025թ. -

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության շրջանակում, ինչպես նաև 2024–2026 թվականների գործողությունների ծրագրով սահմանված պարտավորության հիման վրա օպերատիվ-հետախուզական գործունեությունը (այսուհետ նաև՝ ՕՀԳ) կարգավորող ՀՀ օրենսդրության բարեփոխումը՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» նոր օրենքի ընդունման միջոցով սահմանվել է որպես առաջնահերթություն Կառավարության կողմից: Նպատակը երկակի է. մի կողմից բարձրացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետությունը, մյուս կողմից՝ ապահովել դրանց համապատասխանությունը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային չափանիշներին:

Սույն հետազոտության նպատակն է նպաստել օրենսդրական բարեփոխումների իրականացմանը՝ աջակցելով ազգային ռազմավարությամբ ձևակերպված նպատակների իրագործմանը: Հետազոտությունը միևնույն ժամանակ ուղղված է ինչպես մարդու իրավունքների երաշխիքների ամրապնդմանը գործող իրավակարգավորման շրջանակում, այնպես էլ օպերատիվ-հետախուզական համակարգի արդյունավետության բարձրացմանը՝ անհրաժեշտ գործիքակազմի վերլուծության միջոցով:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերլուծությունն իրականացվել է համադրական մեթոդով՝ ընդգրկելով համաշխարհային փորձի ուսումնասիրությունը, միջազգային կազմակերպությունների առաջարկություններն ու հանձնարարականները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով դրանցում ամրագրված չափանիշներին:

Հետազոտության շրջանակում խնդիրների նախնական քարտեզագրումն իրականացվել է ոստիկանության հետ համագործակցությամբ՝ որպես ոլորտի առաջնային շահառու մարմին: Քարտեզագրման գործընթացում հաշվի են առնվել ինչպես փորձագիտական

համայնքի կողմից նույնականացված, այնպես էլ ուստիկանության կողմից բարձրաձայնված հիմնախնդիրները:

## ԲԱԺԻՆ 1

### ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԴԱՏԱԽԱՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

#### **1. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները և խնդիրները, դրանց հարաբերակցությունը քրեական դատավարության հետ**

Ի սկզբանե հարկ է նշել, որ ինչպես օրենսդրության տարբեր ճյուղերում, այնպես էլ օպերատիվ-հետախուզական գործունեության վերաբերյալ իրավակարգավորումներում առկա տարաբնույթ մեկնաբանությունների ու խնդիրների էական մասը պայմանավորված է նաև իրավաստեղծ աշխատանքի նկատմամբ համակարգային լուծումների և մոտեցումների գնալու ակնկալիքների, կամքի, որակային կարողությունների հակասություններով, ինչու չէ՛ նաև բացակայությամբ: Քննարկվողն առնչվում է նաև օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքների տեսակների արձանագրման խնդրին, ինչի վերաբերյալ առաջարկները պայմանավորված են իրավաստեղծ աշխատանքի և օրենսդրության օգտագործման դյուրինացման նկատմամբ պետական քաղաքականությամբ: Ի դեպ, վերոնշյալը բացահայտվում է ներքոնշյալ քննարկման շրջանակում, ինչն ունի կարևոր պրակտիկ նշանակություն: Իրավաստեղծ աշխատանքում ներգրավված մարմինները դեռևս չեն ընկալում ժամանակի պահանջն առ այն, որ օրենսդրության համակարգման աշխատանքի նպատակը դրանից օգտվելու և կիրառելիության մատչելիության ապահովումն է՝ ի շահ մարդու իրավունքների գերակայության ապահովման: Սկզբունքների կիրառելիության խնդրի վերաբերյալ նախ պետական մարմինների, ապա նաև առնչվող սուբյեկտների ընկալման խնդրի հստակեցումը պայմանավորված է ինչպես սկզբունքների իրացումն ապահովող մարմինների կառուցվածքով և գործառույթների համակարգային մոտեցմամբ, այնպես էլ իրացումն ապահովող պաշտոնական մարմինների կարողությունների առկայությամբ:

Խորհրդային Հայաստանում ՕՀԳ ոլորտը կարգավորվել է հանցավորության դեմ պայքարի խնդիրներ ունեցող միութենական պետական մարմինների գերատեսչական ենթաօրենսդրական ակտերով, որոնք կրել են գաղտնի բնույթ և մատչելի չեն եղել հանրության լայն շրջանակների համար: Անկախացումից հետո ՕՀԳ մասին օրենքն առաջին անգամ ընդունվել է 2007թ. հոկտեմբերի 22-ին: ՕՀԳ նպատակների, խնդիրների և սկզբունքների հիմնախնդիրը քննարկելիս հարկ է արձանագրել, որ դրանց իրավակարգավորումներն էապես պայմանավորված են նաև ՕՀԳ ոլորտում կարգավորումների իրավաստեղծագործության մեխանիզմների ընտրության հանգամանքով: Մասնավորապես, ՀՀ իրավական պրակտիկան ժառանգել է խորհրդային շրջանի ավանդույթները, որի արդյունքում ՕՀԳ ոլորտի կարգավորումները էապես մեկուսացած են քրեադատավարական իրավակարգավորումներից: Տվյալ մեկուսացումը/տարանջատումն արտացոլվում է նաև պետական մտածողության և պետական մարմինների գործունեության մեջ: Այսպես, ՕՀԳ-ն մինչ օրենքում 2022 թ. հունիսի 9-ի փոփոխությունները (պայմանավորված 2021 թ. ընդունված քրեական և քրեադատավարական օրենսգրքերի ուժի մեջ մտնելու հետ) դիտարկվում էր նեղ իմաստով՝ որպես սուսկ ՕՀՄ-ների անցկացում: 2022թ. փոփոխությունից հետո ՕՀԳ հասկացությունը ներառում է նաև այդ միջոցառումների նախապատրաստումը, արդյունքների ամրագրումն ու իրացումը, որոնք կարող են իրացվել գաղտնի և բացահայտ մեթոդների և միջոցների կիրառմամբ: ՕՀԳ միջոցառումներն ամբողջ ծավալով իրականացվում են ինչպես ՕՀ մարմինների կողմից իրենց վերապահված հիմնական խնդիրների իրականացման շրջանակում՝ որպես ինքնուրույն գործունեություն, այնպես էլ նախաձեռնված քրեական վարույթի իրականացվող հետաքննության շրջանակում՝ որպես օժանդակող գործունեություն: Սրանով ՕՀԳ և քրեական դատավարության հարաբերակցության շրջանակներն ընդգծվեցին: Ըստ էության, իրավակարգավորման նման ձևաչափն արձանագրված է հետխորհրդային տարածքում գործող պետությունների մեծամասնության օրենսդրական համակարգում: **Մինչդեռ արևմտյան համակարգում իրավակարգավորումներով ՕՀԳ-ն իր ամբողջ գործունեության ծավալով և շրջանակով ներառված է քրեադատավարական իրավակարգավորումների տրամաբանության մեջ, ինչից ելնելով էականորեն փոխվում է ՕՀԳ սկզբունքների, խնդիրների և նպատակների իրավակարգավորումների առանձնահատկությունները:**

ՀՀ իրավակարգավորման պարագայում ՕՀԳ-ն և քրեական դատավարությունը գործունեության ինքնուրույն տեսակներ են՝ իրենց յուրահատուկ խնդիրներով, դրանց լուծման սեփական մեթոդներով և միջոցներով: Վերջիններիս սահմանները հատկապես ընդգծվում են հանցավորության դեմ մինչև քրեական վարույթի նախաձեռնումն իրականացվող պայքարի շրջանակում, որտեղ ՕՀԳ իրականացնող մարմիններն իրենց հատուկ միջոցներով և մեթոդներով լուծում են հանցագործությունների կամ դրանք կատարող անձանց հայտնաբերման, հանցավորության կանխման խնդիրներ՝ գործելով ՕՀԳ մասին օրենքի շրջանակում: ՔԴՕ 173-րդ հոդվածի իրավակարգավորման համաձայն՝ ՕՀԳ իրականացնող մարմնից ստացված տեղեկությունները քրեական վարույթ նախաձեռնելու հիմք են հանդիսանում: Այս հանգամանքը նույնպես ընդգծում է ՕՀԳ առանձին դերակատարությունն ինչպես քրեական դատավարության, այնպես էլ հանցավորության դեմ ընդհանուր պայքարի համար:

ՕՀԳ սկզբունքների վերաբերյալ առաջարկությունները պայմանավորված են նաև ՕՀԳ նպատակ-խնդիր հարաբերակցության գնահատմամբ, և այդ առումով հարկ է նկատի ունենալ հայեցակետը, ըստ որի պետական գործունեության ցանկացած տեսակ նպատակաուղղված է սոցիալական այնպիսի արժեքների ձևավորմանն ու պահպանությանը, որոնք կնպաստեն պետության բնականոն զարգացմանն ու անվտանգության ապահովմանը, մարդկանց իրավունքների և ազատությունների, հասարակության հոգևոր և նյութական արժեքների պաշտպանությանը: ՕՀԳ վերավերյալ քննարկումներում կարևոր է նաև մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու տեսանկյունից: Ցանկացած նպատակի հասնելու համար անհրաժեշտ է առաջադրել և լուծել որոշակի խնդիրներ: Ուստի կարելի է հավելել, որ նպատակները որոշակիորեն արտահայտվում են առանձին խնդիրներում և հակառակը՝ խնդիրներն իրենց ամբողջության մեջ ըստ էության որոշակիորեն արտահայտում են նպատակը, քանի որ անմիջականորեն բխում են դրանից: Նույն մոտեցումը պետք է դրսևորել նաև ՕՀԳ խնդիրների նկատմամբ, որոնք սահմանված են ՕՀԳ օրենքի 4-րդ հոդվածում: Թեև հոդվածը վերնագրված է ՕՀԳ նպատակները, այնուամենայնիվ այնտեղ սահմանված դրույթներն իրենց բովանդակությամբ ՕՀԳ

խնդիրներն են և ոչ թե նպատակները: Նպատակը ցանկալի արդյունք է, որին կարելի է հասնել որոշակի խնդիրներ լուծելով:

### **Առաջարկներ.**

1. ՕՀԳ օրենքի 4-րդ հոդվածում նշված դրույթներում առկա են անհարկի կրկնություններ, որոնք ավելորդ ծանրաբեռնում են նշված հոդվածը: Այսպես, 4-րդ հոդվածով սահմանված «վկաների, դիակի, հանցագործության հետքերի, առարկաների, իրեղեն ապացույցների և այլ իրերի, փաստաթղթերի հայտնաբերումը» ամբողջությամբ հանցագործության բացահայտման տարրեր են, որոնք արդեն սահմանված են 1-ին կետում, ուստի կրկնությունը ավելորդ է:

2. 4-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ կետերում սահմանված մաքսանենգության և քրեակատարողական հիմնարկներում նախապատրաստվող հանցագործությունների նախազգուշացումը, խափանումը, բացահայտումը նույնպես ամբողջությամբ ներառվում են հանցագործությունների հայտնաբերման, բացահայտման, կանխման և խափանման մասին 1-ին կետում սահմանված առավել ընդգրկուն դրույթի մեջ:

3. 4-րդ հոդվածի 9-րդ կետի ձևակերպումը ենթակա է շտկման, քանի որ որպես նպատակ(խնդիր) սահմանված է հետևյալը. «հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգությանը սպառնացող հանգամանքների առկայությունը, ինչպես նաև հատուկ պետական պաշտպանություն իրականացնող մարմնի կողմից՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում օպերատիվ-հետախուզական մարմիններին տրված ցուցումները, որոնք վերաբերում են հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգությանն սպառնացող հանգամանքների վերացմանը»:

### **2. Օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքները**

ՕՀԳ իրականացման սկզբունքների իրավակարգավորումը տրված է օրենքի 5-րդ հոդվածում, դրանք են.

- օրինականության,
- մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների և օրինական շահերի պաշտպանության և գերակայության,

- գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցության,

- ՕՀԳ իրականացնող մարմինների աշխատակիցների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահության,

- ՕՀԳ բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության:

Ըստ էության, ՕՀԳ իրականացման սկզբունքները բաժանվում են երկու խմբի՝ սահմանադրական և ճյուղային: Սահմանադրական՝ օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների և օրինական շահերի պաշտպանության և գերակայության, ճյուղային՝ գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցության, ՕՀԳ իրականացնող մարմինների աշխատակիցների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահության: Սահմանադրական սկզբունքներն ունեն գերակայություն ճյուղային սկզբունքների նկատմամբ: Նախ հարկ է նշել, որ բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության սկզբունքը որպես դատավարական սկզբունք ձևակերպված է եղել 1961թ. Հայկական ՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 14)՝ որպես վարույթն իրականացնող մարմնի կողմից անձնական կամ խմբային շահերով պայմանավորված սուբյեկտիվ դրսևորումների, սուբյեկտիվ եզրակացությունները և գնահատականները բացառող հանգամանք: Քանի որ միայն բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտված ապացույցների բավարար համակցությամբ ձևավորված ողջամիտ կարծիքի, գիտելիքի հիման վրա է հնարավոր հասնել արդարացի որոշման կայացման, կարևոր է, որ քննություն իրականացնելիս սթափ գնահատվի իրավիճակը, և ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ արված հետևություն հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ որոշակի գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա: Այս սկզբունքը ՕՀԳ համար նույնպես կիրառելի է սակայն մի տարբերությամբ, որ ՕՀԳ շրջանակում խոսքը կարող է վերաբերել օպերատիվ հաշվառման գործերին և օպերատիվ տեղեկությունների ձեռքբերմանն ու օպերատիվ ճանապարհով ապացուցման ենթակա հանգամանքներին: ՕՀԳ համար այդ սկզբունքը չունի վերոնշյալ նշանակությունը, ինչ դատավարության և նման ելակետի հիմքով այն ամրագրված չէ ԱՊՀ երկրների օրենսդրություններում: **Կարծում ենք սակայն, որ, ելնելով**

հայեցակարգային առումով ՕՀԳ իրավակարգավորումները դատավարական օրենսդրական իրավակարգավորումներում ներառելու անհրաժեշտությունից, վերոնշյալ սկզբունքի ներառումն արդարացված է:

Կարևոր խնդիր է սահմանադրական սկզբունքների՝ ՕՀԳ մասին օրենքում ներառելու անհրաժեշտության հարցի քննարկումը: Արձանագրենք, որ որոշ տեսաբանների և պրակտիկ աշխատողների մոտ սահմանադրական սկզբունքների՝ ՕՀԳ օրենքում ամրագրելու խնդրի վերաբերյալ առկա է մոտեցում առ այն, որ դրանց ամրագրումն անհիմն կրկնողություն է և ավելորդ ծանրաբեռնվածություն է առաջացնում ՕՀԳ օրենքում: Կարծում ենք, որ նման դիրքորոշումը հաշվի չի առնում հետևյալը.

- ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ինչպես դատական մարմինների, այնպես էլ այլ իրավապահ մարմինների գործունեության մեջ էական տարածում ունի որոշումներ կայացնելիս կոնկրետ կիրառվող ակտերին գերակայություն տալու և դրանցում բացերի և հակասությունների պարագայում սահմանադրականության հարցով սահմանադրական արդարադատության մարմինն ղիմելու, ուստի նաև ծանրաբեռնելու պրակտիկան, ինչի պարագայում սահմանադրական սկզբունքների մատնանշումը ճյուղային օրենսդրական ակտերում համարում ենք առկա իրավիճակից բխող իրավակիրառ անհրաժեշտություն: Այլ է խնդիրն այն իրավական համակարգերում, որտեղ սահմանադրական արդարադատություն իրականացվում է դատական տարբեր աստիճանների կողմից, ինչպես օրինակ ԱՄՆ պարագայում:

- Իրավակիրառ մարմիններում գործունեության մեջ նկատելի է որոշումներ կայացնելիս սահմանադրական սկզբունքների հիմքով մեկնաբանողական կարողությունների բացը կամ պակասը: Անշուշտ սա կարող է դիտարկվել համարձակ դիտարկում, սակայն ոչ իրականությունից կտրված:

- Վերոնշյալ երկու դիտարկումները որոշակիորեն կարող են մեղմվել իրավաստեղծ ճշգրիտ և արդարացված աշխատանքի պարագայում, որի արդյունքը պետք է լինի համակարգված իրավական ակտերի առկայությունը, ինչի վերաբերյալ կնշվի նաև ՕՀԳ օրենսդրության և ՕՀԳ նկատմամբ հսկողության հարցերի շրջանակում:

**Առաջարկ.**

Ելնելով վերը նշվածից՝ գտնում ենք, որ սահմանադրական սկզբունքների ներառումն օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարգավորող օրենսդրության մեջ արդարացված է, ուստի առաջարկում ենք դրանք պահպանել:

### **3. Դատախազական հսկողության սահմաններն օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ, ՕՀԳ իրականացնող մարմինների ինքնավարությունը**

ՕՀԳ իրականացման օրինականությունն օբյեկտիվորեն ապահովում է ոչ միայն դրա նկատմամբ իրականացվող դատական ու գերատեսչական վերահսկողության գործիքներով, այլ նաև դատախազական հսկողությամբ, որի կարևորությունը դժվար է գերազնահատել: Այն հանդես է գալիս ՕՀԳ իրականացման ընթացքում անձանց իրավունքների պաշտպանության լրացուցիչ կառուցակարգ այնքանով, որքանով դատախազական հսկողությունը մինչդատական վարույթի օրինականությունն ապահովող էական գործիքակազմ է ներկայացնում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը մինչդատական վարույթում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկն է և դատախազական հսկողության հետ համատեղ կոչված է ապահովելու նախաքննության մարմնի գործողությունների ու որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը<sup>1</sup>: Դատախազական հսկողության և դատական վերահսկողության փոխհարաբերության խնդիրը քննարկել է ՄԴ-ն: Մասնավորապես, քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության ու դատական վերահսկողության հետ կապված, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերի համալիր վերլուծությունը միանշանակ վկայում է այդ գործառույթների ընդհանուր նպատակի (որպես իրավապահ գործունեություն), սակայն տարբեր առանձնահատկությունների մասին, ինչով պայմանավորված Սահմանադրական դատարանը գտել է, որ այն դիրքորոշումը, որ դատախազական հսկողությունը, և դատական հսկողությունը միմյանց լրացնող

<sup>1</sup> Տես Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0081/11/09 գործով 2010 թվական փետրվարի 12-ի որոշումը

ինաստիտուտներ են, չի բխում այդ գործառույթների սահմանադրաիրավական բովանդակությունից: ՄԴ-ն գտել է, որ քրեական գործերով մինչդասական վարույթի շրջանակում քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների ու անգործության դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդ բնագավառը կարգավորող նորմերի դրույթները պետք է ընկալվեն նաև որպես համակարգային ամբողջություն, որը պայմանավորված է մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանադրաիրավական բովանդակությամբ և երաշխիք է՝ ՀՀ սահմանադրության 18-րդ հոդվածով նախատեսված անձանց իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար<sup>2</sup>:

ՕՀԳ նկատմամբ դատախազական հսկողության բովանդակությանն է անդրադարձել նաև ՄԻԵԴ-ը: Մասնավորապես, ընդգծելով կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտությունը և այդ գործով քննության հատուկ մեթոդների, մասնավորապես, գաղտնի գործակալների մասնակցությամբ գաղտնի միջոցառումների իրականացման թույլատրելիությունը՝ միևնույն ժամանակ գտել է, որ ոստիկանական սադրանքի դեպքերի բացառման նպատակով այդ մեթոդների կիրառումը պետք է իրականացվի հստակ սահմաններում՝ ողջամիտ ու բավարար երաշխիքների ապահովմամբ, ինչպիսին է համապատասխան միջոցառման կատարումը թույլատրելու, այն իրականացնելու և դրա նկատմամբ վերահսկողության հստակ ու կանխատեսելի ընթացակարգերի նախատեսումը<sup>3</sup>: Մի շարք գործերով ՄԻԵԴ-ը եվրոպական կոնվեցիայի 6-րդ հոդվածի խախտում է արձանագրել, մասնավորապես այն հիմքով, որ գաղտնի միջոցառումը թույլատրվել է այն մարմնի հասարակ վարչական որոշմամբ, որը հետագայում իրականացրել է տվյալ միջոցառումը, և դրա նկատմամբ բացակայել է դատական կամ այլ անկախ մարմնի վերահսկողությունը<sup>4</sup>: Գաղտնի միջոցառման նկատմամբ վերահսկողության կապակցությամբ ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ դատական վերահսկողությունն առավել

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 07.12.2009թիվ թիվ ՄԴՈ-844 որոշումը

<sup>3</sup> Տե՛ս Ramanauskas v. Lithuania գործով 05.02.2008 վճիռը, գանգատ թիվ 74420/01, կետեր 50-53

<sup>4</sup> Տե՛ս Vanyan v. Russia գործով 15.12.2005թ վճիռը, գանգատ թիվ 53203/99., կետեր 46-47, Khudobin v Russia գործով 26.10.2006 թիվ վճիռ, գանգատ թիվ 59696/00. Կետ 135, Bannikova v Russia գործով 04.11.2010թ. վճիռը, գանգատ թիվ 18757/06, կետեր 49-50

համապատասխան երաշխիք կարող է հանդիսանալ՝ այնուամենայնիվ, նշելով, որ համապատասխան ընթացակարգերի և երաշխիքների առկայության դեպքում հսկողական այլ միջոցները, ինչպիսին է, օրինակ, դատախազական հսկողությունը, նույնպես կարող են կիրառվել<sup>5</sup>: ՄԻԵԴ-ի վերոնշյալ դիրքորոշումների ուժով՝ որոշ երկրներ իրենց օրենսդրություններում նախատեսել են քննարկվող գործողությունների կատարման նկատմամբ նախնական դատական վերահսկողության համակարգ<sup>6</sup>:

Այսպես, ՕՀԳ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասն ուղղակիորեն ամրագրում է, որ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթաց իրականացնելիս դատախազը հսկողություն է իրականացնում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Այս առումով կարևոր նշանակություն ունի ՕՀԳ նկատմամբ դատախազական հսկողության սահմանների և ՕՀԳ ինքնավարության սահմանների ճշգրտման, դրանք օրենսդրությամբ կարգավորվածության ճշգրտության հարցերը:

Հիշյալ հսկողության սահմանների ճշգրտման հետ կապված հարցերը ևս որոշակիորեն կարգավորվում են օրենսդրությամբ: ***Օրինականության նկատմամբ հսկողություն ինքնին չի նշանակում ՕՀԳ-ին առնչվող կազմակերպական եղանակների ընտրության հարցում մեթոդական կամ այլ՝ նեղ մասնագիտական բնույթի աջակցություն:*** Հակառակ դեպքում, ուղղակիորեն կխախտվեր կոնկրետ ՕՀԳ տեսակի շրջանակում համապատասխան եղանակների կենսագործման հարցում օպերատիվ-հետախուզական մարմնի ինքնավարությունը: Այդ հիմքով օրենսդիրն ուղղակիորեն ընդգծել է, որ դատախազի կողմից հսկողության ենթակա չեն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման ու իրականացման եղանակները: Խնդրին անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանը՝ հայտնելով հետևյալի իրավական դիրքորոշումը. «մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության և դատարանի վերահսկողության շրջանակներում քննվող բողոքների արդյունքում խախտված իրավունքների վերականգնման ձևերն ու եղանակները տարբեր են: Համապատասխան բողոքի քննության արդյունքում դատարանն անձի

<sup>5</sup> Stu Miliniene v Lithuania գործով 24.06.2008 վճիռը, գանգատ թիվ 74355/01, կետ 39

<sup>6</sup> Stu Committee of Ministers, Resolution ResDH(2001)12, 26 february 2001, Resolution CM/ResDH(2011)231, 1 October 2008

խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե մինչդասական վարույթն իրականացնող մարմնի դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես առկա է դատախազական հսկողության պարագայում (ՀՀ քր դատ օրենսգրքի 53-րդ հոդվածը), այլ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելով»<sup>7</sup>:

Դատախազական հսկողությունը պետք է իրացվի ՕՀԳ-ին առնչվող փաստաթղթաշրջանառությանը ծանոթանալու նպատակով դատախազի ակտիվ նախաձեռնությամբ, ինչի հետ կապված՝ ՕՀԳ օրենքն ամրագրում է համապատասխան կազմակերպական կառուցակարգեր: Մասնավորապես, ՕՀԳ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասն արձանագրում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազի պահանջով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը պարտավոր է նրան ներկայացնել այդ միջոցառումների անցկացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն, իսկ դատախազն իր հերթին պարտավոր է ապահովել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների՝ իրեն ներկայացրած փաստաթղթերի ու տեղեկությունների գաղտնիությունը:

ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց տվյալներն իրենց բնույթով պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն են, որոնց առկայության պայմաններում դատախազական հսկողության շրջանակում դրանց տրամադրումն ուղղակիորեն կհակասեր նշված անձանց գործունեության հիմքում ընկած խորհրդապահական սկզբունքին: Դրանով է պայմանավորված ՕՀԳ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումն առ այն, որ ՕՀԳ իրականացնող մարմինների հաստիքային աշխատակիցների ու այդ մարմինների հետ գաղտնի համագործակցող անձանց վերաբերյալ տեղեկությունները դատախազին ներկայացվում են միայն այդ անձանց համաձայնությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջ է գալիս նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը: Կարծում ենք, որ նշված իրավակարգավորումն ըստ էության բացառում

<sup>7</sup> Տես վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0081/11/09 քրեական գործով 2010 թիվ փետրավրի 12-ին կայացրած որոշումը

է նման տեղեկատվության տրամադրումը դատախազին ընդհանրապես, քանի որ ՕՀԳ մարմինն է որոշելու քրեական պատասխանատվության ենթարկելու հարցի «անհրաժեշտությունը»: ՕՀԳ նկատմամբ հսկողության շրջանակում հայտնի դարձած տեղեկատվությունը հրապարակելու արգելքը սահմանելուն զուգահեռ նպատակային չէ առանձին տեղեկություններին ծանոթանալու սահմանափակում ամրագրել դատախազի համար: Սա կարևոր է թե՛ հսկողության արդյունավետության, թե՛ անձի իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Բացի վերոգրյալից, դատախազական հսկողությունն օպերատիվ-հետախուզական մարմնի նկատմամբ հիմնականում ապահովվում է հանձնարարությունների միջոցով: Հանձնարարությունների մասով համապատասխան իրավական հիմքեր նախատեսված են ինչպես ՕՀԳ օրենքով, այնպես ՀՀ ՔԴՕ-ով: Մասնավորապես, ՕՀԳ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասն ուղղակիորեն արձանագրում է օպերատիվ-հետախուզական մարմնի պարտականությունը՝ կատարել դատախազի, քննիչի կողմից քրեական վարույթի ընթացքում տրված, նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչվող, իրավասու մարմնի կողմից գրավոր հանձնարարությունները՝ անհրաժեշտ ՕՀԳ-եր անցկացնելու ու գաղտնի քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ: ՕՀԳ իրականացնող մարմնի կողմից քրեական վարույթի շրջանակում դատախազի հանձնարարության կատարումը թեպետ իրագործման իմաստով պարտադիր է, այդուհանդերձ, հետաքննության մարմնի պետն իրավասու է վերադաս դատախազին բողոք հասցեագրել նշված հանձնարարության առնչությամբ՝ միաժամանակ չկասեցնելով դրա կատարումը:

Դարձյալ պետք է արձանագրենք, որ իրավակարգավորումներն առնչվում են մինչդատական վարույթի փուլին, մինչդեռ դրա շրջանակից դուրս ՕՀԳ դաշտն ըստ էության դուրս է դատախազական հսկողության տրամաբանությունից:

### **Առաջարկներ.**

1. Գլխավոր դատախազությունում ստեղծել առանձին կառուցվածքային միավոր առանց որևէ սահմանափակման ՕՀԳ տեղեկատվության ողջ դաշտին տիրապետելու նպատակով:

2. Նման իրավիճակին վերջ դնելու, ուստի նաև ՕՀԳ իրացման բոլոր փուլերում անձի իրավունքների ապահովումը երաշխավորելու համար կարևոր է ՕՀԳ ներառումը քրեական դատավարության տրամաբանության մեջ՝ դուրս գալով կարծրատիպերից:

ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Միջամտության օրինականության և անհրաժեշտության չափանիշների փոխկապակցվածության համատեքստում օրենքի որակը ենթադրում է, որ ազգային օրենսդրությունը պետք է ոչ միայն հասանելի լինի և կանխատեսելի՝ կիրառման տեսանկյունից, այլև պետք է երաշխավորի, որ գաղտնի հսկողության միջոցառումները կիրառվեն բացառապես այն դեպքերում, երբ դրանք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ մասնավորապես նախատեսելով չարաշահումներից պաշտպանող բավարար և արդյունավետ երաշխիքներ և անվտանգության կառուցակարգեր<sup>8</sup>:*

**1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների կիրառման հիմքերը**

Գործող «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) համաձայն (հոդված 36, մաս 1)՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացվում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի որոշման հիման վրա: Մինևույն ժամանակ նշված որոշման կայացման համար անհրաժեշտ փաստական հիմքերը/պայմաններն օրենքում ամրագրում չեն ստացել, չնայած նրան, որ Օրենքի հենց նույն 36-րդ հոդվածի անվանումը («Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին **որոշման** հիմքերը») ենթադրում է, որ դրանով պետք է սահմանվեին հատկապես օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու **որոշման կայացման հիմքերը (փաստական հիմքերը)**, այլ ոչ բացառապես օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ֆորմալ (իրավական) հիմքը:

Նշվածի հետ մեկտեղ միջոցառումների իրականացման հիմքերը սահմանված չեն նաև կոնկրետ դրանցից յուրաքանչյուրի էությունը և/կամ անցկացման նպատակը սահմանող Օրենքի դրույթներում (տես հոդվածներ 15-30): Այնուամենայնիվ, հնարավոր է փաստել, որ մի

<sup>8</sup> Roman Zakharov v. Russia, no. [47143/06](https://hudoc.echr.coe.int/eng?i=001-159324), <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-159324>, § 236

շարք առանձին միջոցառումների անցկացման պայման-հիմքերն Օրենքով սահմանված են, մասնավորապես. Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները (ներքին դիտում, նամակագրության, և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում; թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում; ֆինանսական գործարքների վերահսկում) կարելի է անցկացնել միաժամանակ երկու պայմանի առկայության պարագայում.

**ա.** երբ առերևույթ առկա են հիմքեր՝ կասկածելու, որ անձը, որի նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն.

**բ.** այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը ողջամտորեն անհնարին է:

Հարկ է նկատել, որ նույնիսկ նշված կարգավորումը բավարար հստակ չէ, քանի որ պարզաբանված չէ, թե կոնկրետ միջոցառումն անցկացնող մարմնի վրա դրված **ո՞ր խնդիրների** իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման անհնարիությունն է ապահովում վկայակոչված պայմանի առկայությունը:

### **Միջազգային փորձի ուսումնասիրություն.**

Եվրոպական տարածաշրջանի երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրների գերակշիռ մեծամասնության օրենսդրությամբ օպերատիվ-հետախուզական բնույթ ունեցող միջոցառումների ընդհանուր հիմքերը հատուկ կերպով սահմանված չեն, փոխարենը այդ հիմքերը (շատ դեպքերում հետապնդվող նպատակների կամ կիրառման պայմանների ձևակերպման տեսքով) **սահմանված են առանձին, առավել ինվազիվ և առավելապես գաղտնի/քողարկված բնույթի միջոցառումների համար**, ինչպիսիք են ՀՀ օրենսդրությամբ սահմանված հետևյալ միջոցառումներին բովանդակային առումով համանման միջոցառումները. թվային հաղորդակցության վերահսկումը, նամակագրության վերահսկումը, ներքին դիտումը (Լեհաստան, Ֆրանսիա, Սլովենիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա), ինչպես նաև հսկիչ գնումը, վերահսկելի մատակարարումը կամ գնումը (Լեհաստան):

Այսպես օրինակ, **Լեհաստանում** հեռահաղորդակցության ցանցերի միջոցով անցկացված խոսակցությունների բովանդակության ստացումը և ձայնագրումը, անձանց տեսանկարահանումը և ձայնագրումը, նամակագրության բովանդակության ստացումը, համակարգչային տվյալների կրիչներում, համակարգերում պարունակվող տվյալների ստացումը, ծանրոցների բովանդակության ստուգումն իրականացվում են կոնկրետ ցանկով նախատեսված հանցագործության կանխման, այն կատարած անձանց հայտնաբերման և ապացույցների հայտնաբերման և ամրագրման նպատակով, այն դեպքերում, երբ այլ միջոցներն անարդյունավետ են կամ անպիտան<sup>9</sup>: Հսկիչ գնման համար հիմք է հանդիսանում նախկինում ստացված՝ համապատասխան բնույթի հանցագործության մասին արժանահավատ տվյալի առկայությունը<sup>10</sup>:

**Ֆրանսիայի** քրեական դատավարության օրենսդրության համաձայն՝ հաղորդակցությունների վերահսկման համար հիմք է հանդիսանում կոնկրետ հանցագործություններով քննության ընթացքում ծագած անհրաժեշտությունը<sup>11</sup>:

**Սլովենիայի** քրեական դատավարության օրենսդրության համաձայն՝ գաղտնի հետևելը և հաղորդակցությունների վերահսկումը կիրառելու համար հիմք են հանդիսանում ողջամիտ կասկածը, որ անձը կատարել է, կատարում է, նախապատրաստում կամ կազմակերպում է համապատասխան հանցագործության կատարումը, և կարելի է հիմնավորված եզրակացնել, որ այլ միջոցներով հնարավոր չէ հայտնաբերել, կանխել կամ ապացուցել այդ արարքը կամ դա կարող է առաջացնել անհամաչափ ռիսկերություններ<sup>12</sup>: Նույն հիմքերն են նախատեսված թվային հաղորդակցությունների վերահսկման համար նաև **Իսպանիայի** քրեական դատավարության օրենսդրությամբ<sup>13</sup>:

**Գերմանիայի** քրեական դատավարության օրենսդրության համաձայն՝ հեռահաղորդակցությունները կարող են վերահսկվել առանց շահագրգիռ անձանց իմացության, եթե որոշակի փաստեր հիմք են տալիս կասկածելու, որ անձը, որպես հանցագործ կամ հանցակից, կատարել է համապատասխան ցանկով նախատեսված ծանր

<sup>9</sup> <https://isap.sejm.gov.pl/isap.nsf/download.xsp/WDU20250000636/T/D20250636L.pdf> հոդված 19,

<sup>10</sup> <https://isap.sejm.gov.pl/isap.nsf/download.xsp/WDU20250000636/T/D20250636L.pdf> հոդված 19a

<sup>11</sup> [https://www.legifrance.gouv.fr/codes/article\\_lc/LEGIARTI000044568177](https://www.legifrance.gouv.fr/codes/article_lc/LEGIARTI000044568177) հոդված 706-95

<sup>12</sup> <https://pisrs.si/pregledPredpisa?id=ZAKO362> հոդված 149a, 149b

<sup>13</sup> <https://www.boe.es/buscar/act.php?id=BOE-A-1882-6036> Հոդված 588 bis a

հանցագործություն, և եթե փաստերի հաստատման կամ մեղադրյալի գտնվելու վայրը որոշելու այլ եղանակներ շատ ավելի դժվար են կամ չունեն հաջողելու որևէ հնարավորություն:

**Իտալիայում** նույնպես օրենսդրությամբ սահմանվում են առանձին՝ հաղորդակցության վերահսկողության հետ կապված գործողությունների հիմքերը, դրանք, մասնավորապես արտացոլված են քրեական դատավարության օրենսդրությամբ<sup>14</sup>:

**Հարկ է նկատել**, սակայն, որ նշված երկրներում օպերատիվ-հետախուզական գործունեության օրենսդրական կարգավորման կոնցեպտն էականորեն տարբերվում է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև հետսովետական տարածաշրջանի երկրների օրենսդրության մեջ կիրառվող կոնցեպտից: Ըստ այդմ օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարգավորվում է ոչ թե առանձին օրենսդրական ակտով, այլ հիմնականում քրեական դատավարությունը և ոստիկանության գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ:

Մի խումբ այլ երկրների օրենսդրությամբ, այնուամենայնիվ, սահմանվում են առավել միջամտող կամ օպերատիվ-հետախուզական բնույթ ունեցող միջոցառումների իրականացման համար ընդհանրական հիմքերը: Այսպես.

**Հյուսիսային Մակեդոնիայում** քրեական դատավարության օրենսդրությունը սահմանում է, որ հատուկ քննչական միջոցները (որոնց թվում են թվային հաղորդակցության վերահսկողությունը, հետևումն ու ձայնագրումը բնակարանում, կամ դրանից դուրս, համակարգչային համակարգի գաղտնի զննությունը, անձնական տվյալների որոնումը, կաշառք տալու և ընդունելու նմանակումը, վերահսկվող առաքումը, անձանց ու առարկաների տեղափոխումը, ձերբակալման կամ առարկաների առգրավման ձգձգումը, գաղտնի ինքնություն ունեցող անձանց օգտագործումը, կեղծ բանկային հաշվի բացումը և այլ) կարող են կիրառվել, երբ առկա է հավանականություն, որ դրանց միջոցով կստացվեն տվյալներ և ապացույցներ, որոնք անհրաժեշտ են քրեական գործն արդյունավետ վարելու

---

<sup>14</sup> <https://www.altalex.com/documents/news/2014/03/26/mezzi-di-ricerca-della-prova> հոդված 266 – 267

համար, ինչպես նաև տվյալներ այն անձի մասին, ում նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում և որոնք հնարավոր չէ ստանալ այլ եղանակով<sup>15</sup>:

**Լիտվայի** «Քրեական հետախուզության մասին» օրենքում սահմանվում են հետախուզական գործունեության ընդհանուր հիմքերը, այն է.

1) նախապատրաստվող, կատարվող կամ կատարված համապատասխան հանցանքների մասին տեղեկությունները,

2) կասկածյալի կամ մեղադրյալի փախուստը,

3) մարդու անհայտ կորելը,

4) անձի պաշտպանությունը հանցավոր ազդեցությունից<sup>16</sup>:

**Էստոնիայի** Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար որպես հիմք կարող են ծառայել.

1. Հանցագործության նախապատրաստման մասին տեղեկատվություն հավաքելու անհրաժեշտությունը՝ այն հայտնաբերելու և կանխելու նպատակով;

2. Անձի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին որոշման կատարման անհրաժեշտությունը;

3. Տեղեկատվության հավաքման անհրաժեշտությունը՝ բռնազանձման վարույթի ընթացքում;

4. Քրեական դատավարության ընթացքում հանցագործության վերաբերյալ տեղեկատվության հավաքման անհրաժեշտությունը:

**Լատվիայի** «Օպերատիվ գործունեության մասին» օրենքով օպերատիվ միջոցառումների իրականացման համար որպես հիմք/նախապայման է սահմանվում նշված օրենքով կամ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված նպատակների իրագործման անհնարին կամ դժվար իրականանալի լինելը<sup>17</sup>:

Առանձին ուշադրության է արժանի **Մոլդովայի** «Հատուկ որոնողական գործունեության մասին» օրենքը<sup>18</sup>, որի 19-րդ հոդվածը առավել մանրամասն է կարգավորում օպերատիվ

<sup>15</sup> [https://www.refworld.org/themes/custom/unhcr\\_rw/pdf-viewer.html?file=https%3A%2F%2Fwww.refworld.org%2Fsites%2Fdefault%2Ffiles%2Fattachments%2F5d319ea44.pdf](https://www.refworld.org/themes/custom/unhcr_rw/pdf-viewer.html?file=https%3A%2F%2Fwww.refworld.org%2Fsites%2Fdefault%2Ffiles%2Fattachments%2F5d319ea44.pdf) հոդված 252

<sup>16</sup> <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.434526> հոդված 8

<sup>17</sup> <https://likumi.lv/ta/id/57573-operativas-darbibas-likums> հոդված 4

<sup>18</sup> [https://www.legis.md/cautare/getResults?doc\\_id=140305&lang=ro](https://www.legis.md/cautare/getResults?doc_id=140305&lang=ro)

միջոցառումների իրականացման հիմքերը, ինչպես նաև տարանջատում դրանք միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նախապայմաններից: Այսպես, նշված իրավակարգավորման համաձայն՝ հատուկ միջոցառումները նշանակվում են, եթե առկա են.

1. հիմքեր վկայող այն մասին, որ.

ա) առկա է անմիջական սպառնալիք անձի, հանրային առողջության, պետական սեփականության, հասարակական կարգի և հանրային անվտանգության նկատմամբ ոտնձգության;

բ) առկա է սպառնալիք գործակալի, գաղտնի աշխատակցի կամ նրանց ընտանիքի անդամների, վկաների և քրեական գործի այլ մասնակիցների անվտանգության նկատմամբ;

գ) առկա է սպառնալիք կալանավորման վայրերում անվտանգության համար;

2. հայտնի դարձած տեղեկություններ՝

ա) այն անձանց վերաբերյալ, ովքեր խուսափում են քրեական հետապնդումից կամ դատարանից, թաքնվում են քրեական հետապնդման մարմնից, խուսափում են պատժի կատարումից կամ փախուստ են կատարել կալանավայրերից;

բ) անհետ կորած անձանց կամ չճանաչված դիակների վերաբերյալ;

3. իրավապահ մարմինների, միջազգային կազմակերպությունների կամ Եվրոպական Միության հաստատությունների/գործակալությունների հարցումները, համաձայն այն միջազգային պայմանագրերի, որոնց կողմ է Մոլդովայի Հանրապետությունը:

Նույն իրավակարգավորման համաձայն՝ հատուկ որոնողական միջոցառումներ նշանակվում են, եթե կատարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) օրենքի պահանջները հնարավոր չէ իրականացնել այլ եղանակով;

բ) գործողությունն անհրաժեշտ է և համաչափ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակման առումով;

գ) հետապնդվում է օրինական նպատակ:

### **Առաջարկ.**

Թեև միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օպերատիվ-հետախուզական բնույթ ունեցող միջոցառումների ընդհանրական հիմքերն օրենսդրության մեջ ամրագրելու պրակտիկան լայնորեն տարածված չէ եվրոպական տարածաշրջանի երկրներում, փոխարենն առավել տարածված է առանձին, առավել խիստ միջամտություն

ենթադրող միջոցառումների հիմքերի/պայմանների ամրագրումը՝ այնուամենայնիվ, հաշվի առնելով թե՛ ՀՀ-ում առկա օպերատիվ-հետախուզական գործունեության կոնցեպտը, թե՛ գործող Օրենքի, հատկապես դրա 36-րդ հոդվածի տրամաբանությունը, առավել նպատակահարմար ենք համարում օրենսդրորեն հստակ սահմանել օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման փաստական հիմքերն ընդհանրական կամ յուրաքանչյուր տեսակի գործողության համար: Միննույն ժամանակ սահմանվող հիմքերը պետք է լինեն հստակ և որևէ տարրնկալման հնարավորություն չտան՝ ապահովելով թե՛ մարդու իրավունքների բավարար երաշխիքը, թե՛ հետագայում միջոցառման արդյունքում ձեռք բերված նյութի/ապացույցի օրինականության անվիճելիությունը:

## **2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների կիրառման շրջանակը**

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների կիրառման հիմքերի հետ սերտ փոխկապակցված մեկ այլ խնդիրն այն է, որ գործող Օրենքը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարված լինելու վերաբերյալ առերևույթ հիմքերի առկայությունը սահմանել է որպես ներքին դիտում; նամակագրության, և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում; թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում; ֆինանսական գործարքների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նախապայման (հոդված 31, մաս 4): Այդպիսով, արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման դեպքում վերը նշված նախապայմանը չի սահմանվում, այնինչ նշված գործողությունը նույնպես ենթադրում է մարդու մասնավոր կյանքին համանման աստիճանի միջամտություն, հատկապես այն դեպքում, երբ անձը ողջամտորեն չէր կարող ենթադրել արտաքին դիտման անցկացման հնարավորության մասին: Հօգուտ այս փաստարկի խոսում է այն հանգամանքը, որ նշված գործողությունը, ըստ գործող Օրենքի, կարող է անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ (հոդված 34), ինչպես նաև այն, որ քրեական դատավարության շրջանակում արտաքին դիտումը՝ որպես գաղտնի քննչական գործողություն (այդ դեպքում այն իրականացվում է բացառապես տեխնիկական միջոցների կիրառմամբ) կարող է իրականացվել բացառապես ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների, ինչպես

նան կաշառք ստանալու կամ կաշառք տալու ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթներով և կրկին դատարանի թույլտվությամբ:

### **Միջազգային փորձի ուսումնասիրություն.**

Եվրոպական խորհրդի անդամ պետություններում լայնորեն տարածված է այն մոտեցումը, որի պարագայում արտաքին դիտման (դրան համապատասխանող բովանդակությամբ միջոցառումների) անցկացման համար սահմանված հիմքերը/նախապայմանները նույնական են մասնավոր կյանքին միջամտող այլ միջոցառումների անցկացման նախապայմաններին, կամ բոլոր տեսակի կամ առնվազն առավել միջամտող բնույթ ունեցող միջոցառումների անցկացման համար նախատեսված են միևնույն նախապայմանները և չափանիշները: Այսպիսի մոտեցում է որդեգրված Գերմանիայում (Քրեական դատավարության օրենսգիրք<sup>19</sup>), Լիտվայում (Քրեական հետախուզության մասին օրենք<sup>20</sup>), Լատվիայում (Օպերատիվ գործունեության մասին օրենք<sup>21</sup>), Էստոնիայում (Քրեական դատավարության օրենսգիրք<sup>22</sup>), Խորվաթիայում (Քրեական դատավարության օրենսգիրք<sup>23</sup>), Չեխիայում (Քրեական դատավարության օրենսգիրք<sup>24</sup>), Հյուսիսային Մակեդոնիայում (Քրեական դատավարության օրենսգիրք<sup>25</sup>), Իսպանիայում (Քրեական դատավարության օրենսգիրք<sup>26</sup>), Իտալիայում (Քրեական դատավարության օրենսգիրք<sup>27</sup>):

### **Առաջարկ.**

Խնդրի լուծման համար առաջարկվում է արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման համար, երբ այն իրականացվում է տեխնիկական միջոցների կիրառմամբ, որպես անհրաժեշտ նախապայման նույնպես սահմանել՝ անձի, ում նկատմամբ

<sup>19</sup> <https://www.gesetze-im-internet.de/stpo/> հոդվածներ 100f, 100h

<sup>20</sup> <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/e9d29ac0094d11ef8e4be9fad87afa59?jfwid=-ynvzke8> հոդվածներ 8, 10, 15

<sup>21</sup> <https://likumi.lv/ta/id/57573-operativas-darbibas-likums> հոդվածներ 4, 10

<sup>22</sup> <https://www.riigiteataja.ee/akt/106012016019> հոդված 126.2

<sup>23</sup> <https://www.zakon.hr/z/174/zakon-o-kaznenom-postupku> հոդված 332

<sup>24</sup> <https://www.zakonyprolidi.cz/cs/1961-141> հոդված 158d

<sup>25</sup> [https://www.refworld.org/themes/custom/unhcr\\_rw/pdf-](https://www.refworld.org/themes/custom/unhcr_rw/pdf-)

[js/viewer.html?file=https%3A%2F%2Fwww.refworld.org%2Fsites%2Fdefault%2Ffiles%2Fattachments%2F5d319ea44.pdf](https://www.refworld.org/2Fsites%2Fdefault%2Ffiles%2Fattachments%2F5d319ea44.pdf) հոդված 252

<sup>26</sup> <https://www.boe.es/buscar/act.php?id=BOE-A-1882-6036> հոդված 588 quater a

<sup>27</sup> <https://www.altalex.com/documents/news/2014/03/26/mezzi-di-ricerca-della-prova> հոդված 266, մաս 2

գործողությունը պետք է իրականացվի, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ կասկածվելը:

### 3. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների գործողության տևողությունը

Գործող Օրենքը նախատեսում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշման ժամկետը չի կարող երկու ամսից ավելի լինել և դատարանի թույլտվությամբ կարող է երկարաձգվել յուրաքանչյուր անգամ երկու ամիսը չգերազանցող ժամկետով: Այս կարգավորումն ըստ էության համապատասխանում է միջազգային փորձին և ՄԻԵԴ սահմանած՝ գաղտնի հսկողության միջոցների պարբերական վերանայման անհրաժեշտության չափանիշին:

Միաժամանակ թեև Օրենքը (հոդված 39, մաս 2) նախատեսում է, որ մի շարք գաղտնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընդհանուր ժամկետը չի կարող 12 ամսից ավել լինել, չի նախատեսում պայմաններ, որոնց դեպքում միջոցառումը պետք է դադարեցվի՝ անկախ նախատեսված ժամանակից, երբ վերանում է դրա շարունակման անհրաժեշտությունը, ինչը որպես էական երաշխիք կարևորվել է ՄԻԵԴ կողմից մի շարք վճիռներով<sup>28</sup>, ինչպես նաև Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) կողմից<sup>29</sup>:

Հարկ է նկատել, որ այս դեպքում ևս գործող Քրեական դատավարության օրենսգրքով սահմանվել է ավելի առաջադիմական կարգավորում, այսպես ըստ օրենսգրքի կարգավորումների՝ քննիչի նախաձեռնած միջոցառումը պետք է դադարեցվի, եթե վերացել է դրա անհրաժեշտությունը (հոդված 243, մաս 6):

#### **Առաջարկ.**

Որպես օպերատիվ-հետախուզական միջոցառումների դադարեցման պարտադիր հիմք սահմանել անհրաժեշտության վերացման հանգամանքը:

<sup>28</sup> Kennedy v. the United Kingdom, no. 26839/05, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%2226839/05%22%5D%2C%20%22%5C%22%20%22%7D>, § 161; Klass and others v. Germany, no. 5029/71, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%225029/71%22%5D%2C%20%22%5C%22%20%22%7D>, § 52; Roman Zakharov v. Russia, no. 47143/06, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%2247143/06%22%5D%2C%20%22%5C%22%20%22%7D>, § 241

<sup>29</sup> [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2024\)043-e#:~:text=common%20to%20require%20the%20investigating,authorised%20not%20only%20for%20investigating](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2024)043-e#:~:text=common%20to%20require%20the%20investigating,authorised%20not%20only%20for%20investigating) § 99-101

#### 4. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տվյալների պահպանման, փոխանցման և ոչնչացման ընթացակարգերը

Գործող Օրենքը համակարգային առումով չի կարգավորում օպերատիվ-հետախուզական միջոցառումների կիրառման արդյունքում ստացված տվյալների պահպանման, դրանց փոխանցման և ոչնչացման ընթացակարգերը:

Օրենքում առկա են առանձին կարգավորումներ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները քրեական վարույթն իրականացնող կամ այլ իրավասու մարմիններին ներկայացնելու<sup>30</sup> և օպերատիվ հաշվառման գործեր վարելու վերաբերյալ<sup>31</sup>, որոնք մի կողմից հատվածական են, մյուս կողմից՝ խնդրահարույց:

Այսպես, նախ հարկ է նկատել, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներն իրավասու մարմիններին ներկայացնելու կարգ, որին հղում է արվում Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով, որպես այդպիսին ոչ Օրենքով, ոչ Քրեական դատավարության օրենսգրքով ոչ այլ՝ առանձին ՕՀԳ իրականացնող մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ չի սահմանվում: Ավելին՝ եթե քրեական վարույթ իրականացնող մարմիններին նյութերը փոխանցելու հիմքերը սահմանված են Օրենքով և Քրեական դատավարության օրենսգրքով, ապա այլ մարմիններին դրանք փոխանցելու հիմքերը նույնքան անորոշ են, ինչպես և փոխանցելու կարգը: Միննույն ժամանակ նշված կարգը սահմանելն օպերատիվ մարմիններին վերապահելու՝ գործող Օրենքում որդեգրված մոտեցումը նույնպես խնդրահարույց է, քանի որ չի կարող ապահովել նմանօրինակ զգայուն տվյալների միատեսակ և ապահով շրջանառությունը: Նույն խնդիրը վերաբերում է նաև ստացված նյութերի պահպանության, դրանց հասանելիության տրամադրման հարցերին:

Որպես արդյունք, արձանագրում ենք, որ գործող օրենսդրությամբ սահմանված չեն օպերատիվ նյութերի՝ դրանց գաղտնիությամբ պայմանավորված պահպանությանն առաջադրվող պահանջները, անվտանգության (տվյալների արտահոսքի դեմ) երաշխիքները,

<sup>30</sup> Հոդված 40, մաս 3-ով սահմանվում է, որ համապատասխան կարգը նախատեսվում է օրենքով և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավական ակտերով

<sup>31</sup> Հոդված 40, մաս 5-ով սահմանվում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները վարում են օպերատիվ հաշվառման գործեր, որոնցում կուտակվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման հիմքերի, դրանց արդյունքում ձեռք բերված տվյալների, տվյալների ստուգման, համակարգման, վերլուծության, ինչպես նաև ընդունվող որոշումների վերաբերյալ օպերատիվ-ծառայողական փաստաթղթերը, ընդ որում՝ օպերատիվ հաշվառման գործերի ցանկը, գործերը վարելու, դրանցով անցնող անձանց հաշվառման կարգը սահմանվում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավական ակտերով

օպերատիվ մարմնի ներսում նյութերին հասանելիություն ունեցող անձանց շրջանակը և հասանելիություն ստանալու կարգը, տարբեր օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների միջև տվյալների փոխանակման հիմքերը և ընթացակարգը:

**Տվյալների ոչնչացումը.** Հատուկ ուշադրության է արժանի գործող օրենսդրության մեջ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում ստացված նյութերի ոչնչացման մանրամասն ընթացակարգերի բացակայությունը: Այսպես, Օրենքը նյութերի ոչնչացման պահանջ սահմանում է հետևյալ դեպքերում.

- երբ անձն իր նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-9-րդ կետերով նախատեսված հանգամանքների հիմքով քրեական հետապնդում չհարուցելուց, քրեական հետապնդումը դադարեցնելուց կամ իր նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ավարտվելուց հետո չորս ամսվա ընթացքում չի պահանջում տրամադրել իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված նյութերը և փաստաթղթերը<sup>32</sup>.

- երբ ներքին դիտում, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում կամ թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում և դրանց նպատակից անկախ ստացվել են փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններ<sup>33</sup>.

- թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումն առանց դատարանի թույլտվության իրականացրած լինելու և 48 ժամվա ընթացքում այն թույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքն օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչություն չներկայացնելու կամ դրա իրականացումը չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը վարչություն ներկայացնելու դեպքերում<sup>34</sup>.

---

<sup>32</sup> Հոդված 6, մաս 3

<sup>33</sup> Հոդված 31, մաս 7

<sup>34</sup> Հոդված 32, մաս 3

- դատարանի թույլտվություն պահանջող օպերատիվ-հետախուզական միջոցառումներն առանց դատարանի թույլտվության իրականացրած լինելու և 24 ժամվա ընթացքում դատարան դիմելու արդյունքում դատարանի կողմից այն չթույլատրելու դեպքերում<sup>35</sup>.

- եթե օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը բավարար չի համարում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հիմքերը և այն դադարեցվում է<sup>36</sup>.

- եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում այն անձի վերաբերյալ, որի նկատմամբ այդ միջոցառումներն իրականացվում են, ձեռք են բերվել տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ միջոցառումներն անցկացնելու մասին որոշմամբ<sup>37</sup>:

Այսպիսով Օրենքով չի սահմանվում, թե արդյոք պետք է ոչնչացվեն, եթե այդ՝ ինչպես և ինչ ժամկետում, այն նյութերը.

- ա)** որոնք առնչվում են անձին, որ քրեական վարույթի արդյունքում չի արդարացվել՝ դատավճռով ճանաչվել է մեղավոր, կամ որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի՝ վերը չհիշատակված կետերի հիմքով,

- բ)** որոնց ձեռքբերմանն առհասարակ չի հաջորդել քրեական վարույթի նախաձեռնում, և անձինք, որոնց դրանք առնչվում են, չեն ստացել որևէ դատավարական կարգավիճակ:

- գ)** որոնց ստացումը թեև նախատեսված է եղել միջոցառումն անցկացնելու որոշմամբ, սակայն որոնք այլևս պիտանի և անհրաժեշտ չեն, այդ թվում՝ չեն դառնում քրեական վարույթի հիմք կամ չեն օգտագործվում դրա շրջանակում:

- դ)** որոնք վերաբերում են բացառապես երրորդ անձանց, որոնց նկատմամբ այդ միջոցառումը չի իրականացվել:

---

<sup>35</sup> Հոդված 34, մաս 3

<sup>36</sup> Հոդված 37, մաս 8

<sup>37</sup> Հոդված 38, մաս 3



- մի շարք այլ օրենսդրական բացերի առկայությունը<sup>44</sup>:

Գաղտնի հսկողության միջոցների կիրառման արդյունքում ձեռքբերված տեղեկությունների անպիտանության (այդ թվում՝ քրեական գործի համար նշանակություն չունենալու, քրեական գործի հարուցման համար հիմքեր չբացահայտելու, քրեական գործով օգտագործված չլինելու, հանցագործության կանխման համար պիտանի չլինելու) դեպքում դրանց ոչնչացման պարտականությունը սահմանված է բազմաթիվ ԵԽ անդամ պետությունների, այդ թվում Գերմանիայի<sup>45</sup>, Լիտվայի<sup>46</sup>, Նորվեգիայի<sup>47</sup>, Շվեդիայի<sup>48</sup>, Նիդերլանդների<sup>49</sup>, Ֆինլանդիայի<sup>50</sup> ոլորտային օրենսդրությամբ:

### **Առաջարկ.**

Առաջարկում ենք սահմանել օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում ստացված նյութերի պահպանման կարգ, որը չի սահմանափակվի օպերատիվ գործ կազմելու և վարելու ընդհանրական ձևակերպմամբ, այլ օրենսդրական կամ առնվազն Կառավարության որոշման մակարդակով կամրագրի դրանց պահպանության անվտանգային երաշխիքները՝ այդ թվում սահմանելով դրանց հասանելիություն ունեցող և հասանելիություն տալու լիազորություն ունեցող ծառայողների հստակ շրջանակ:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ամրագրել օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված նյութերի՝ ՕՀԳ իրականացնող մարմինների միջև փոխանակման հիմքերը և փոխանակման մեկ միասնական կարգ:

Առաջարկվում է նաև լրացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված նյութերի ոչնչացման հիմքերը՝ համաձայն վերևում նշվածի, ինչպես

---

<sup>44</sup> Kopp v. Switzerland, no. 23224/94, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2223224%2F94%22%7D>}, § 73, 74; Iordachi and others v. Moldova, no. 25198/02, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2225198%2F02%22%7D>}, § 50; Dudchenko v. Russia, no. 37717/05, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2237717%2F05%22%7D>}, § 103

<sup>45</sup> [https://www.gesetze-im-internet.de/stpo/\\_101.html](https://www.gesetze-im-internet.de/stpo/_101.html)

<sup>46</sup> <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/e9d29ac0094d11ef8e4be9fad87afa592?jfwid=-ynvzke8> հոդված 5

<sup>47</sup> [https://lovdata.no/dokument/NLE/lov/2010-05-28-16/KAPITTEL\\_7#%C2%A747](https://lovdata.no/dokument/NLE/lov/2010-05-28-16/KAPITTEL_7#%C2%A747) հոդված 50

<sup>48</sup> [https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/rattegangsbalk-1942740\\_sfs-1942-740/#K27](https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/rattegangsbalk-1942740_sfs-1942-740/#K27) գլուխ 27, § 24

<sup>49</sup> [https://wetten.overheid.nl/BWBR0001903/2025-05-15/#BoekEerste\\_TiteldeelVD\\_AfdelingDerde\\_Artikel126cc](https://wetten.overheid.nl/BWBR0001903/2025-05-15/#BoekEerste_TiteldeelVD_AfdelingDerde_Artikel126cc) հոդված 126cc; <https://wetten.overheid.nl/BWBR0035498/2014-09-01> գլուխ 5, հոդված 5.3

<sup>50</sup> [https://www.finlex.fi/fi/lainsaadanto/2011/872#chp\\_5\\_sec\\_55v20131168\\_heading](https://www.finlex.fi/fi/lainsaadanto/2011/872#chp_5_sec_55v20131168_heading) գլուխ 5, հոդված 55

[https://www.finlex.fi/api/media/statute-foreign-language-translation/53244/mainPdf/main.pdf?timestamp=2018-01-30T00%3A00%3A00.000Z&utm\\_source=chatgpt.com](https://www.finlex.fi/api/media/statute-foreign-language-translation/53244/mainPdf/main.pdf?timestamp=2018-01-30T00%3A00%3A00.000Z&utm_source=chatgpt.com) հոդված 49

նան օրենսդրորեն ամրագրել ոչնչացման կարգին վերաբերող հիմնական դրույթները (ոչնչացման եղանակը, պատասխանատու սուբյեկտին):

## 5. Թվային հաղորդակցություններին չարտոնված հասանելիության ռիսկը

Գործող օրենքը սահմանում է, որ թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումն ապահովում է ՀՀ ազգային անվտանգության մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը (այսուհետ նան՝ Գլխավոր վարչություն) այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինների միջնորդության հիման վրա<sup>51</sup>: Գլխավոր վարչությունը հեռահաղորդակցության օպերատորի մոտ ապահովում է համապատասխան օպերատիվ-տեխնիկական անհրաժեշտ պայմաններ՝ օրենքով լիազորված մարմինների կողմից նշված միջոցառումն իրականացնելու համար<sup>52</sup>: Միննույն ժամանակ, թվային հաղորդակցության վերահսկումն իրականացնելու նպատակով իրավասու մարմինները միջոցառումը թույլատրող դատարանի որոշման քաղվածքը ներկայացնում են Գլխավոր վարչություն<sup>53</sup>:

Այսպիսով գործող Օրենքը ո՛չ օպերատիվ-հետախուզական միջոցառում նախաձեռնող մարմինների, ո՛չ էլ այն տեխնիկապես իրագործող Գլխավոր վարչության համար չի սահմանում պարտականություն հեռահաղորդակցության կազմակերպություններին նախապես, իսկ օրենքով նախատեսված անհետաձգելի դեպքերում՝ հետագայում, ներկայացնելու միջոցառումը թույլատրող դատարանի որոշումը կամ դրա քաղվածքը: Ավելին՝ թվային հեռահաղորդակցության օպերատորները նույնիսկ տեխնիկապես տեղեկացված չեն լինում հաղորդակցության հսկողության սկզբի, ավարտի, դրա առարկայի և առհասարակ դրա փաստի վերաբերյալ<sup>54</sup>: Նշվածը զուտ տեխնիկապես հնարավորություն է տալիս շրջանցելու դատական թույլտվության ընթացակարգերը և առերևույթ ռիսկ է ստեղծում համապատասխան տեխնիկական հնարավորություն ունեցող մարմինների կողմից լիազորությունները չարաշահելու և անձանց հաղորդակցությանը չարտոնված կերպով միջամտելու հետ կապված:

<sup>51</sup> Հոդված 9, մաս 1

<sup>52</sup> Հոդված 9, մաս 4

<sup>53</sup> Հոդված 32, մասեր 1

<sup>54</sup> Համաձայն կատարված հարցման պատասխանի

## Միջազգային փորձի ուսումնասիրություն.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ռուսան Ջախարովն ընդդեմ Ռուսաստանի գործով, արձանագրելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, գտել է, որ չարաշահումների առումով հատկապես ռիսկային են գաղտնի հսկողության այնպիսի համակարգերը, որոնք անվտանգության մարմիններին, ոստիկանությանը տալիս են թույլտվության ընթացակարգը շրջանցելու հնարավորություն տվող տեխնիկական միջոցներ և յուրաքանչյուր քաղաքացու հաղորդակցությունն ուղղակիորեն գաղտնալսելու հնարավորություն՝ **չպահանջելով նրանցից կապի ծառայություններ մատուցողներին ներկայացնել գաղտնալսման թույլտվությունը**: Ռուսաստանի Դաշնության ներպետական օրենսդրության համաձայն, **ինչպես և ՀՀ գործող օրենսդրության դեպքում**, իրավասու մարմինները պարտավոր չէին կապի ծառայություններ մատուցողներին ներկայացնել դատական թույլտվություն նախքան անձի հաղորդակցություններին հասանելիություն ստանալը, իսկ կապի ծառայություններ մատուցողները պետք է տեղադրեին սարքավորումներ, որոնք թույլ կտային իրավապահ մարմիններին **ուղղակիորեն** հասանելիություն ունենալ բոլոր օգտատերերի բոլոր բջջային հաղորդակցություններին<sup>55</sup>:

Նույն գործով Դատարանն անդրադարձել է քննարկվող խնդրին նաև գաղտնի հսկողության միջոցների համակարգի նկատմամբ հետագա հսկողության արդյունավետության համատեքստում: Դատարանն արձանագրել է, որ կապի ծառայություններ մատուցողների կողմից տեղադրված սարքավորումներին առաջադրվող պահանջը՝ չգրանցել իրականացվող գաղտնալսումների մասին տեղեկատվությունը իրավապահ մարմինների՝ բոլոր հաղորդակցությունները ուղղակիորեն գաղտնալսելու տեխնիկական կարողության հետ համակցությամբ **վերահսկող մարմնի համար անհնար է դարձնում առանց համապատասխան դատական թույլտվության իրականացված գաղտնալսումները հայտնաբերելը**՝ այդպիսով ցանկացած վերահսկողություն դարձնելով անարդյունավետ<sup>56</sup>:

Գաղտնի հսկողության միջոց կիրառելը թույլատրելու դատական կամ այլ ատյանի որոշումը/քաղվածքը/պահանջը նախապես հեռահաղորդակցության օպերատորներին

<sup>55</sup> Roman Zakharov v. Russia, no. [47143/06](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2247143/06%22%7D), <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2247143/06%22%7D>, §§ 269-270

<sup>56</sup> Նույն տեղում, § 272

ներկայացնելու կարգավորումներ նախատեսված են Նորվեգիայի<sup>57</sup>, Նիդերլանդների<sup>58</sup>, Սլովենիայի<sup>59</sup>, Շվեդիայի<sup>60</sup>, Իսպանիայի<sup>61</sup> և մի շարք այլ երկրների օրենսդրությամբ:

### **Առաջարկ.**

Անձանց հաղորդակցությանը չարտոնված միջամտության ռիսկը կառավարելու նպատակով առաջարկում ենք օրենսդրորեն ամրագրել թվային, այդ թվում հեռախոսային հաղորդակցության վերահսկում իրականացնելը թույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը՝ թվային հաղորդակցության օպերատորին ներկայացնելու պահանջ:

## **6. Դատական վերահսկողության արդյունավետությունը**

Գործող Օրենքի համաձայն՝ դատարանի թույլտվությունը պահանջող օպերատիվ-հետախուզական միջոցառումների կամ դրանց ժամկետի երկարաձգման միջնորդությունների ներկայացման (օրենքի համատեքստում նաև քննության) նկատմամբ կիրառելի են Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգերը՝ Օրենքով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ<sup>62</sup>: Ըստ այդմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ և 293-րդ հոդվածների համաձայն՝ միջնորդությանը կցվում են դրա հիմնավորվածությունը հաստատող անհրաժեշտ նյութերի պատճենները, իսկ դատարանի պահանջով քննիչը, հսկող դատախազը, դատական նիստին մասնակցող հետաքննության մարմնի պետը և հետաքննիչը **տալիս են միջնորդության առարկայի վերաբերյալ բացատրություններ:**

Նշվածի հետ մեկտեղ Օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ ի թիվս այլ տեղեկությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աղբյուրների, մեթոդների, այդ միջոցառումների արդյունքների և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ

<sup>57</sup> <https://lovdata.no/dokument/SF/forskrift/2016-09-09-1047> §4

<sup>58</sup> <https://wetten.overheid.nl/BWBR0009950/2024-01-01> հոդված 13.1; 13.2

<sup>59</sup> <https://pisrs.si/pregledPredpisa?id=ZAKO8611> հոդված 228

<sup>60</sup> [https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-2022482-om-elektronisk-kommunikation\\_sfs-2022-482/](https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-2022482-om-elektronisk-kommunikation_sfs-2022-482/) §29; 32

<sup>61</sup> <https://www.boe.es/buscar/act.php?id=BOE-A-1882-6036> հոդված 588 ter e

<sup>62</sup> Հոդված 34, մաս 2

մարմինների հետ գաղտնիության հիման վրա համագործակցող և համագործակցած անձանց մասին տեղեկությունները հանդիսանում են պետական գաղտնիք: Ավելին՝ վերջիններիս մասին տեղեկությունների հրապարակումը թույլատրվում է միայն նրանց գրավոր համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական գաղտնիքի հրապարակման համար օրենքով սահմանված կարգով:

Օրենքի և Քրեական դատավարության օրենսգրքի վերը մեջբերված իրավանորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ դրանք չեն երաշխավորում դատարանի հնարավորությունը միջամտության անհրաժեշտությունն ու համաչափությունը հիմնավորելու համար լրացուցիչ նյութեր և/կամ օպերատիվ տվյալների աղբյուրների բացահայտում պահանջել միջնորդություն ներկայացրած մարմնից, ինչը միջազգային չափորոշիչների համաձայն<sup>63</sup> կարևոր երաշխիք է դատարանի վերահսկողության արդյունավետության ապահովման համատեքստում:

### **Միջազգային փորձի ուսումնասիրություն.**

Անդրադառնալով քննարկվող խնդրին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ լիազոր մարմինը պետք է ի վիճակի լինի ստուգելու անձի նկատմամբ ողջամիտ կասկածի առկայությունը, մասնավորապես արդյոք կան փաստացի նշաններ՝ կասկածելու, որ նա ծրագրել, կատարում կամ կատարել է հանցավոր արարքներ կամ այլ գործողություններ, որոնք կարող են հանգեցնել գաղտնի հսկողության միջոցների կիրառման: Այն նաև պետք է հնարավորություն ունենա պարզելու՝ արդյոք պահանջվող միջոցառումը համապատասխանում է ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության պահանջին, համաչափ է հետապնդվող օրինական նպատակներին<sup>64</sup>: Ռոման Չախարովն ընդդեմ Ռուսաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ Ռուսաստանի օրենսդրությունը սահմանում է դատական վերահսկողության սահմանափակ շրջանակ՝ նախատեսելով, որ գաղտնի գործակալների կամ ոստիկանության ազդարարների (informers), օպերատիվ-հետախուզական միջոցառումների կազմակերպման և մարտավարության

<sup>63</sup> St' u Roman Zakharov v. Russia, no. 47143/06, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-159324>, §§ 261-263

<sup>64</sup> Klass and others v. Germany, no. 5029/71, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%225029/71%22%7D>, § 51; Association for European Integration and Human Rights and Ekimdzhiev v. Bulgaria, no. 62540/00, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%2262540/00%22%7D>, § 79-80; Iordachi and Others v. Moldova, no. 25198/02, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%2225198/02%22%7D>, § 51; Kennedy v. the United Kingdom, no. 26839/05, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%2226839/05%22%7D>, § 36

մասին տեղեկություններ պարունակող նյութերը չեն կարող ներկայացվել դատավորին և հետևաբար դուրս են դատարանի վերահսկողության շրջանակից: Դատարանը գտել է, որ **նշված տեղեկատվությունը դատարաններին չտրամադրելը զրկում է վերջիններին հնարավորությունից գնահատելու՝ կա արդյոք բավարար փաստական հիմք անձին կասկածելու համապատասխան արարքը կատարելու մեջ**<sup>65</sup>: Այս առնչությամբ Դատարանն ավելի վաղ գտել էր, որ կան մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս հաշվի առնելու և՛ անվտանգության օրինական նկատառումները, և՛ դրանով հանդերձ, անհատին տալիս են դատավարական պաշտպանության էական երաշխիք<sup>66</sup>:

Խնդրին անդրադարձել է նաև Վենետիկի հանձնաժողովը 2024թ. հրատարակված «Լրտեսողական ծրագրերի կարգավորումը՝ օրենքի գերակայությանը և մարդու իրավունքների հարգմանը համապատասխան» զեկույցում՝ արձանագրելով, որ օրենսդրությունը պետք է նախատեսի ավելի բարձր նյութական չափանիշներ և ապացուցողական շեմեր լրտեսող ծրագրային ապահովման օգտագործման թույլտվություն տալու հարցում, երբ այն կիրառվում է կանխատեսվող/ապագա հանցագործությունների կամ սպառնալիքների հետաքննման նպատակով (օրինակ՝ առկա կոնկրետ նշանների առումով): Դատական կամ անկախ այլ մարմնի հաստատումը, որը չի ուսումնասիրում այս կարևորագույն հարցերը, չի կարող համարվել իրական երաշխիք<sup>67</sup>:

### **Առաջարկ.**

Առաջարկվում է ամրագրել դատարանի լիազորությունն օպերատիվ-հետախուզական միջնորդությունների քննության շրջանակում միջնորդությունը ներկայացրած մարմնից պահանջելու լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում՝ օպերատիվ տվյալների ստացման աղբյուրների վերաբերյալ:

## **7. Իրավական պաշտպանության միջոցները**

Գործող Օրենքի իրավակարգավորումների համատեքստում անձը փաստացի հնարավորություն է ստանում տեղեկանալ իր նկատմամբ օպերատիվ-հետախուզական

<sup>65</sup>Roman Zakharov v. Russia, no. 47143/06, [https://hudoc.echr.coe.int/eng#{%22appno%22:\[%2247143/06%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22appno%22:[%2247143/06%22]}), § 261

<sup>66</sup>Chahal v. the United Kingdom no. 22414/93, [https://hudoc.echr.coe.int/eng#{%22appno%22:\[%2222414/93%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22appno%22:[%2222414/93%22]}), § 131

<sup>67</sup>[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2024\)043-e#:~:text=common%20to%20require%20the%20investigating,authorised%20not%20only%20for%20investigating](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2024)043-e#:~:text=common%20to%20require%20the%20investigating,authorised%20not%20only%20for%20investigating) §§ 107-110

միջոցառումների իրականացման մասին միայն այն դեպքերում, երբ դրանց արդյունքում ստացված նյութն օգտագործվում է քրեական կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ վարույթների շրջանակում, որոնց ինքը մասնակից է դառնում<sup>68</sup>: Նման իրավիճակում անձինք, ովքեր որևէ կերպով չեն ծանուցվում իրենց նկատմամբ միջոցառումների իրականացման մասին, փաստացի գրկվում են նաև դրանց իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունից: Օրենսդրության այս բացը խիստ խնդրահարույց է և հակասում է ՄԻԵԴ կողմից սահմանված՝ օրենքի որակի չափանիշներին, հատկապես այն պայմաններում, երբ օրենսդրությամբ չեն սահմանվում նաև այս կարգավորման բացակայությունը հակակշռող որևէ այլ երաշխիքներ, որպես օրինակ, միջամտության փաստի/դրա բացակայության ապացուցման բեռը պետության վրա դնելը:

Նշվածի հետ մեկտեղ գործող Օրենքը չի սահմանում նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների, այդ թվում նաև իրականացված միջոցառումների արդյունքում ստացված նյութերը տրամադրելու հետ կապված վեճերով բողոքարկման ընթացակարգ<sup>69</sup>: Հարկ է նկատել, որ, թեև քրեական դատավարության շրջանակում գաղտնի քննչական գործողությունների կիրառման արդյունքում ապօրինի միջամտության դեմ իրավական պաշտպանության միջոցներ սահմանված են՝ քննիչի, հետաքննության մարմնի որոշումներն ու գործողությունները, ինչպես նաև միջամտությունը թույլատրող դատական ակտերը բողոքարկելու ընթացակարգերի առկայության համատեքստում<sup>70</sup>, դրանք գործում են բացառապես քրեական վարույթի առկայության պայմաններում<sup>71</sup>: Սա նշանակում է, որ քրեական վարույթի բացակայության պարագայում, իրականացված որևէ միջամտության դեմ իրավական, հատկապես՝ դատական պաշտպանության միջոց սահմանված չէ:

### **Միջազգային փորձի ուսումնասիրություն.**

<sup>68</sup> Հոդված 6, մաս 1

<sup>69</sup> Խնդիրը արձանագրվել է նաև Ոստիկանության կողմից

<sup>70</sup> Քրեական դատավարության օրենսգրքի 299 հոդված

<sup>71</sup> Քրեական դատավարության օրենսգրքը կարգավորում է քրեական վարույթի նախաձեռնման և իրականացման առնչությամբ ծագող իրավահարաբերությունները, ուստի չկա որևէ հիմք՝ դրանք տարածելու քրեական վարույթի բացակայության պայմաններում գաղտնի հսկողության միջոցներ կիրառելու առնչությամբ ծագող իրավահարաբերությունների նկատմամբ: Օրենսգրքի 299-րդ հոդվածը հնարավորություն է տալիս բողոքարկելու բացառապես քրեական վարույթի ընթացքում վարույթի հանրային մասնակցի, այդ թվում՝ հետաքննության մարմնի ի պաշտոնե կատարած գործողությունները:

**Կիրառված միջոցների վերաբերյալ ծանուցումը.** Մասնավոր կյանքին միջամտությունից հետո անձին ծանուցելու պահանջ (երբ ծանուցումը կարող է իրականացվել առանց միջամտության նպատակը վտանգելու), առնվազն առավել ինտենսիվ կերպով միջամտող՝ գաղտնի բնույթի գործողությունների կիրառման վերաբերյալ, նախատեսված է Գերմանիայի<sup>72</sup>, Նորվեգիայի<sup>73</sup>, Շվեդիայի<sup>74</sup>, Նիդերլանդների<sup>75</sup>, Ռումինիայի<sup>76</sup> և մի շարք այլ երկրների<sup>77</sup>՝ գաղտնի հսկողության միջոցների կիրառման ոլորտը կարգավորող օրենսդրությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով հաղորդակցությունների վերահսկողության մասին անձին ծանուցելու խնդրին,, արձանագրել է, որ այն անբակտելիորեն կապված է դատարանների առջև իրավական պաշտպանության միջոցների արդյունավետության հետ<sup>78</sup>, և, մի շարք վճիռներով գնահատելով պատասխանող երկրների օրենսդրությունը, շեշտել է անձանց ծանուցելու պարտականության առկայության անհրաժեշտությունն այն դեպքերում, երբ ծանուցումը կարող է իրականացվել առանց սահմանափակման նպատակը վտանգելու<sup>79</sup>: Դատարանը գտել է, որ անձին որևէ պահի **ծանուցելու պահանջի բացակայությունն անհամատեղելի է Կոնվենցիայի հետ**, քանի որ այն զրկում է նրան 8-րդ հոդվածի իր իրավունքներին անօրինական միջամտության դեմ կարևոր երաշխիքից և դրա համար փոխհատուցում պահանջելու հնարավորությունից<sup>80</sup>:

<sup>72</sup> [https://www.gesetze-im-internet.de/stpo/\\_101.html](https://www.gesetze-im-internet.de/stpo/_101.html) հոդված 101

[https://www.gesetze-im-internet.de/g10\\_2001/\\_12.html](https://www.gesetze-im-internet.de/g10_2001/_12.html) հոդված 12

<sup>73</sup> [https://lovdata.no/dokument/NL/lov/1981-05-22-25/KAPITTEL\\_4-7#KAPITTEL\\_4-7](https://lovdata.no/dokument/NL/lov/1981-05-22-25/KAPITTEL_4-7#KAPITTEL_4-7) հոդված 216j

<sup>74</sup> [https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/rattgangsbalk-1942740\\_sfs-1942-740/#K27](https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/rattgangsbalk-1942740_sfs-1942-740/#K27) գլուխ 27, բաժին 31;

[https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-2007979-om-atgarder-for-att-forhindra-vissa\\_sfs-2007-979/](https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-2007979-om-atgarder-for-att-forhindra-vissa_sfs-2007-979/) 16§

[https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-2008717-om-signalspaning-i\\_sfs-2008-717/](https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-2008717-om-signalspaning-i_sfs-2008-717/) հոդված 11a

<sup>75</sup> <https://wetten.overheid.nl/BWBR0039896/2025-02-12> հոդվածներ 76, 82

<sup>76</sup> <https://legislatie.just.ro/Public/DetaliiDocument/1517> հոդված 21

<sup>77</sup> [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2024\)043-e#:~:text=common%20to%20require%20the%20investigating,authorised%20not%20only%20for%20investigating](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2024)043-e#:~:text=common%20to%20require%20the%20investigating,authorised%20not%20only%20for%20investigating) § 66-67

<sup>78</sup> Roman Zakharov v. Russia, no. [47143/06](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2247143%2F06%22%7D), <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2247143%2F06%22%7D>, § 286

<sup>79</sup> Klass and others v. Germany, no. [5029/71](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%225029%2F71%22%7D), § 58; Gabriele Weber and Cesar Richard Saravia v. Germany, no. [54934/00](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2254934%2F00%22%7D), § 135

<sup>80</sup> Association for European Integration and Human Rights and Ekimdzhiev v. Bulgaria, no. [62540/00](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2262540%2F00%22%7D), <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2262540%2F00%22%7D>, §§ 90-91; Dumitru Popescu v. Romania (no. 2), no. [71525/01](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2271525%2F01%22%7D), <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2271525%2F01%22%7D>, § 77; Roman Zakharov v. Russia, no. [47143/06](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2247143%2F06%22%7D), <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2247143%2F06%22%7D>, § 289-290

Անձի հետագա ծանուցման անհրաժեշտությունը շեշտվել է նաև Վենետիկի հանձնաժողովի կոցմից<sup>81</sup>:

**Բողոքարկման ընթացակարգը.** Կիրառված գաղտնի հսկողության միջոցների օրինականության վիճարկման հնարավորությունը և հստակ ընթացակարգերը սահմանված են Եվրոպայի խորհրդի անդամ բազմաթիվ պետությունների, այդ թվում Ֆրանսիայի<sup>82</sup>, Լիտվայի<sup>83</sup>, Սլովենիայի<sup>84</sup>, Նորվեգիայի<sup>85</sup>, Շվեդիայի<sup>86</sup>, Նիդերլանդների<sup>87</sup>, Ռումինիայի<sup>88</sup> ոլորտային օրենսդրությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր դատական պրակտիկայում Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում է արձանագրել այն դեպքերում, երբ ազգային օրենսդրությունը չէր ապահովում գաղտնի հսկողության դեմ իրավական պաշտպանության բավարար և արդյունավետ միջոցներ: Այսպես, Ռոման Զախարովն ընդդեմ Ռուսաստանի գործով դատարանն անդրադարձել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի գործողությունների բողոքարկման՝ ազգային օրենսդրությամբ սահմանված բոլոր ընթացակարգերին, **որոնք իրենց էությամբ նույնական են ՀՀ օրենսդրությամբ սահմանվածներին՝** գնահատելով դրանք ոչ արդյունավետ: Այսպես, դատարանն արձանագրել է, որ.

**ա)** օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի գործողությունների վերադասին (մարմնի ղեկավարին) կամ դատախազին բողոքարկելը չի կարող համարվել պաշտպանության արդյունավետ միջոց, քանի որ երկուսն էլ չեն համապատասխանում անկախության չափանիշին, միաժամանակ, դատախազների վերահսկողության շրջանակը սահմանափակ է<sup>89</sup>.

<sup>81</sup> [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2024\)043-e#:~:text=common%20to%20require%20the%20investigating,authorised%20not%20only%20for%20investigating](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2024)043-e#:~:text=common%20to%20require%20the%20investigating,authorised%20not%20only%20for%20investigating) §§ 120-123

<sup>82</sup> <https://www.legifrance.gouv.fr/jorf/id/JORFTEXT000030931899> հոդված L. 833-4

<sup>83</sup> <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/e9d29ac0094d11ef8e4be9fad87afa592?jfwid=-yvnvzke8> հոդված 5

<sup>84</sup> <https://www.uradni-list.si/glasilo-uradni-list-rs/vsebina/2022-01-4187/zakon-o-varstvu-osebnih-podatkov-zvop-2> հոդված 11

<sup>85</sup> <https://lovdata.no/dokument/NL/lov/1995-02-03-7> հոդվածներ 5, 15

<sup>86</sup> [https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-2007980-om-tillsyn-over-viss-sfs-2007-980/\\_3\\_§](https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-2007980-om-tillsyn-over-viss-sfs-2007-980/_3_§)

<sup>87</sup> <file:///C:/Users/user/Downloads/20170817+Publicatie+Wiv+2017+in+Staatsblad.pdf> հոդվածներ 114, 124

<sup>88</sup> <https://legislatie.just.ro/Public/DetaliiDocument/1517> հոդված 22

<sup>89</sup> Roman Zakharov v. Russia, no. 47143/06. [https://hudoc.echr.coe.int/eng#{%22appno%22:\[%2247143/06%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22appno%22:[%2247143/06%22]}), § 292

բ) դատական կարգով բողոքարկման ընթացակարգը չի կարող գնահատվել արդյունավետ պաշտպանության միջոց, քանի որ **դրանից կարող էր օգտվել միայն քրեական դատավարության մասնակիցը՝ մինչդրացալսական քննության ընթացքում**, և չէր կարող օգտվել այն անձը, որի նկատմամբ քրեական գործ չի հարուցվել, և որը չգիտեր՝ արդյոք իր հաղորդակցությունները գաղտնալսվել են, թե ոչ<sup>90</sup>.

գ) վարչական դատավարության կարգով և քաղաքացիաիրավական հայցի շրջանակում իրավունքների պաշտպանության հնարավորությունները նույնպես արդյունավետ չեն, քանի որ երկու դեպքում էլ գաղտնի հսկողության իրականացման փաստի ապացուցման բեռը դրված էր հայցվորի վրա և այդ կապակցությամբ ծանուցման կամ պաշտոնական փաստաթղթերին հասանելիության որևէ ձևի բացակայության պայմաններում ապացուցման նման բեռը գործնականում անհնար էր բավարարել (§ 296): Նույն հիմնավորմամբ անարդյունավետ է նաև քրեական պաշտպանության միջոցը (ՌԴ քրեական օրենսգրքով պատասխանատվություն էր նախատեսված իշխանության չարաշահման, անձի անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկատվության չարտոնված հավաքման կամ տարածման և քաղաքացիների հաղորդակցման գաղտնիության իրավունքի խախտման համար)<sup>91</sup>:

### **Առաջարկ.**

Առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել առավել ինտենսիվորեն մարդու մասնավոր կյանքին միջամտող, հատկապես իրենց բնույթով գաղտնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման վերաբերյալ անձին որևէ պահի ծանուցելու պահանջ, երբ ծանուցումը կարող է իրականացվել առանց միջամտության նպատակը վտանգելու: Անհրաժեշտ ենք համարում ծանուցման պահանջ նախատեսել հատկապես արտաքին դիտում (երբ իրականացվել է տեխնիկական միջոցների կիրառմամբ), ներքին դիտում, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում միջոցառումների իրականացման դեպքում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ միջոցառումների իրականացման փաստը մի

---

<sup>90</sup> Նույն տեղում, § 295

<sup>91</sup> Նույն տեղում, § 297

կողմից լիովին գաղտնի է անձի համար, մյուս կողմից առավել ինտենսիվորեն է միջամտում նրա մասնավոր կյանքին:

Միննույն ժամանակ անհրաժեշտ է սահմանել ՕՀԳ իրականացնող մարմինների (դրանց ծառայողների) ընդունած որոշումների, գործողությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվության վերաբերյալ դատարանի կայացրած որոշումների բողոքարկման հստակ ընթացակարգ՝ քրեական դատավարության օրենսդրության անալոգիայով (հնարավոր է նաև բլանկետային նորմի սահմանման միջոցով ապահովելով հենց քրեական դատավարության օրենսգրքի դրույթների կիրառելիությունը):

### ԲԱԺԻՆ 3

#### ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործող Օրենքով սահմանված են օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ վերահսկողության մի շարք մեխանիզմներ.

- անմիջական վերահսկողություն, որն իրականացվում է միջոցառումն անցկացնելու մասին որոշում կայացրած պաշտոնատար անձը.

- դատական վերահսկողություն (կիրառելի է առանձին միջոցառումների նկատմամբ).

- դատախազական հսկողություն, որն իրականացվում է մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության շրջանակում, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթաց իրականացնելիս.

- վերահսկողություն վարչապետի կողմից, ում ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը յուրաքանչյուր մարմնի կտրվածքով ներկայացնում է տարեկան հաշվետվություն բացառապես թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման դեպքերի վերաբերյալ:

Նշված մեխանիզմներից որևէ մեկը չի կարող համարվել ընդհանուր օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտի նկատմամբ արտաքին անկախ վերահսկողություն:

Մասնավորապես, թվարկված մեխանիզմներից առաջինն ըստ էության նույն մարմնի շրջանակում իրականացվող հսկողություն է, որն առերևույթ չի կարող գնահատվել վերահսկողության անկախ մեխանիզմ<sup>92</sup>:

Դատական վերահսկողությունն իրականացվում է կոնկրետ միջոցառումների իրականացման պարագայում և ունի դրվագային բնույթ, այլ կերպ ասած վերաբերում է կոնկրետ դեպքին, անձին:

Դատախազական հսկողությունը, նույնպես հնարավոր չէ համարել ընդհանուր վերահսկողական կառուցակարգ, քանի որ ըստ էության այն նախատեսված է բացառապես

---

<sup>92</sup> Sև Association for European Integration and Human Rights and Ekimdzhiev v. Bulgaria, no. [62540/00](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2262540/00%22%7D), <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2262540/00%22%7D>, § 88:

համապատասխան դատավարական ընթացակարգերի, վարույթների առկայության պարագայում և դրանցից դուրս չի գործում: Նշվածից բացի, տվյալ վերահսկողության տեսակը նաև չի կարող համարվել անկախ, քանի որ քրեական վարույթի շրջանակում գաղտնի քննչական գործողություն իրականացնելու հանձնարարություն տվող քննիչը գործում է նույն դատախազի հսկողությամբ, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով հենց դատախազն է տալիս օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու հանձնարարությունը: Ուստի իրավիճակը, որտեղ դատախազությունը մի կողմից հավանություն է տալիս օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջնորդություններին կամ նախաձեռնում դրանք, այնուհետև վերահսկում դրանց կատարման օրինականությունը, կարող է ողջամիտ կասկածներ առաջացնել այդ մարմնի շահագրգռվածության և հետևապես նաև անկախության վերաբերյալ<sup>93</sup>

Անդրադառնալով վարչապետի կողմից վերահսկողությանը՝ նախ հարկ է նկատել, որ գործող օրենսդրական կարգավորումների շրջանակում այն հնարավոր չէ գնահատել արդյունավետ, քանի որ տարեկան հաշվետվությունները ներառում են միայն հատվածական տվյալներ օպերատիվ-հետախուզական գործունեության վերաբերյալ: Այսպես օրինակ, այն վերաբերում է բացառապես թվային հաղորդակցության վերահսկմանը վերաբերող տվյալներին և չի ներառում տվյալներ մյուս օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման վերաբերյալ: Նույնիսկ նշված միջոցառման կտրվածքով այն չի ներառում օբյեկտիվ գնահատման համար անհրաժեշտ մի շարք տվյալներ, օրինակ՝ դատարաններ ներկայացված, դատարանի կողմից բավարարված և մերժված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելը թույլատրելու միջնորդությունների քանակի, դրանց մերժման հիմքերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ և այլն: Ավելին՝ գործող կարգավորումներով չի նախատեսվում նաև հայտնաբերված խնդիրների առնչությամբ վարչապետի լիազորությունները :

Նշվածի հետ մեկտեղ, վարչապետի կողմից վերահսկողությունը չի կարող գնահատվել լիովին անկախ արտաքին վերահսկողություն, քանի որ առնվազն թվային հաղորդակցությունների վերահսկման մասով օպերատիվ-հետախուզական

<sup>93</sup> Տես նաև նույն իրավիճակի վերաբերյալ ՄԻԵԴ դիրքորոշումը. Roman Zakharov v. Russia, no. 47143/06, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-159324>, § 280



մարմինը, տվյալ դեպքում՝ Հաղորդակցության գաղտնալսման հանձնակատարը, հայտնաբերեր, որ գաղտնալսումն անօրինական է<sup>99</sup>):

Վերոգրյալի հետ մեկտեղ Դատարանը կարևոր է համարում նաև գաղտնի հսկողության միջոցների համակարգի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի գործունեության՝ հանրային վերահսկողության համար բաց լինելը: Այսպես, Լ-ն ընդդեմ Նորվեգիայի գործով դատարանը հանրային վերահսկողության խնդիր չի արձանագրել, քանի որ հսկողություն իրականացնող մարմինը՝ Վերահսկիչ կոմիտեն, տարեկան հաշվետվություն է ներկայացրել կառավարությանը: Բացի սրանից՝ կոմիտեի զեկույցները հրապարակվել են և քննարկվել խորհրդարանում<sup>100</sup>: Նույն կերպ դատարանը խնդիր չի արձանագրել նաև Քենեդին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, որտեղ Հաղորդակցության գաղտնալսման հանձնակատարն ամեն տարի զեկույց էր ներկայացնում երկրի վարչապետին. փաստաթուղթը հրապարակային էր և ներկայացվում էր նաև խորհրդարանին<sup>101</sup>:

Եվրոպայի խորհրդի պետությունների մի մասում գործում են օպերատիվ-հետախուզական բնույթի գործողությունների (այդ թվում՝ ոստիկանության և/կամ տարբեր հետախուզական ծառայությունների կողմից ձեռնարկվող) իրավաչափության նկատմամբ ex post հսկողություն իրականացնող անկախ մասնագիտացված մարմիններ: Այսպես, օրինակ, Շվեդիայում «The Swedish Commission on Security and Integrity Protection» հանձնաժողովը<sup>102</sup>, Նորվեգիայում «EOS» հանձնաժողովը<sup>103</sup>, Իսրայիլում «Անվտանգության և հետախուզական մարմինների քաղաքացիական վերահսկողության խորհուրդը»<sup>104</sup> հետախուզական ծառայությունների գործունեության նկատմամբ իրականացնում են մշտական հսկողություն, այդ թվում՝ պարբերական ստուգումների և մասնավոր անձանցից ստացված բողոքները քննելու միջոցով: Նիդերլանդներում գործում է «Dutch Review Committee on the Intelligence and Security Services» հանձնաժողովը, որը ստուգումներ կարող է իրականացնել թե սեփական նախաձեռնությամբ, թե բողոքների հիման վրա կամ

<sup>99</sup> Kennedy v. the United Kingdom, no. 26839/05, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%2226839/05%22%5D%7D>, §§ 168-169

<sup>100</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%2213564/88%22%5D%7D>

<sup>101</sup> Kennedy v. the United Kingdom, no. 26839/05, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%2226839/05%22%5D%7D>, § 166

<sup>102</sup> <https://www.sakint.se/the-swedish-commission-on-security-and-integrity-protection/>

<sup>103</sup> <https://eos-utvalget.no/en/home/about-the-eos-committee/the-eos-services/>; <https://lovdata.no/dokument/NL/lov/1995-02-03-7?q=1995-02-03>

<sup>104</sup> <https://www.sabor.hr/hr/vijece-za-gradanski-nadzor-sigurnosno-obavjestajnih-agencija-9-saziv>

պարլամենտի, ՆԳՆ կամ ՊՆ դիմումի հիման վրա<sup>105</sup>: Հետախուզական ծառայությունների նկատմամբ ստուգումների իրականացման լիազորությամբ են օժտված նաև անկախ վերահսկողական մարմինները Ֆրանսիայում<sup>106</sup>, Չեխիայում<sup>107</sup>, Բելգիայում<sup>108</sup> և Պորտուգալիայում<sup>109</sup>:

Մի շարք այլ երկրներում *ex post* հսկողությունն իրականացվում է բացառապես պարլամենտական մարմինների/հանձնաժողովների կողմից, ինչպես Ռումինիայում, Լատվիայում, Իսպանիայում, Հունգարիայում, Իտալիայում: Որոշ երկրներում այս հսկողության լայն լիազորություններով օժտված են թե պարլամենտական հանձնաժողովները, թե անկախ մարմինները (օրինակ՝ Գերմանիայում<sup>110</sup>):

Ուսումնասիրված պետությունների փորձը ցույց է տալիս, որ նկարագրված *ex post* հսկողության երկու դեպքերում էլ (առանձին առանձնահատկություններով) ապահովվում է հսկողություն իրականացնող մարմնի լիարժեք հասանելիությունն անհրաժեշտ նյութերին, ինչը կարող է արտահայտվել ընթացիկ գործերի ցուցակները և հեռահաղորդակցությունների ու ինտերնետային տվյալներին մուտք գործելու թույլտվության հարցումների ցուցակները պահանջելու, բացատրություններ ու լրացուցիչ տեղեկություններ ստանալու իրավունքներով:

Հարկ է նկատել, որ պարլամենտական հսկողության հիմնական թերությունը համարվում է պարլամենտական հանձնաժողովների գործառույթների բազմազանությունը, ինչը թույլ չի տալիս պատշաճ ժամանակ տրամադրել խնդրո առարկա ոլորտին և պահել այն ուշադրության կենտրոնում<sup>111</sup>:

## Առաջարկ.

<sup>105</sup> <https://english.ctivd.nl/oversight>

<sup>106</sup> <https://www.cnctr.fr/en/mission>

<sup>107</sup> <https://www.zakonyprolidi.cz/cs/2017-325?utm>

<sup>108</sup> <https://comiteri.be/images/pdf/engels/w.toezicht%20-%20l.control.pdf>

<sup>109</sup> <https://cfsirp.pt/>

<sup>110</sup> Stu <https://rm.coe.int/democratic-and-effective-oversight-of-national-security-services-issue/16806daadb> National practices in Council of Europe member states

<sup>111</sup> Stu <https://rm.coe.int/democratic-and-effective-oversight-of-national-security-services-issue/16806daadb> Democratic and effective oversight of national security services

Առաջարկում ենք օրենսդրորեն նախատեսել օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ անկախ արտաքին վերահսկողության կառուցակարգ՝ ապահովելով առնվազն հետևյալ հիմնական կետերի իրագործումը.

- վերահսկող մարմնի անկախությունը, ինչի համար հնարավոր է կիրառել Եվրոպայի խորհրդի ավելի քան 20 պետություններում գործադրված մոդելը, որտեղ վերահսկող մարմնի դերը վերապահված է խորհրդարանին/խորհրդարանական համապատասխան հանձնաժողովներին<sup>112</sup>.

- վերահսկող մարմնի հասանելիությունը դրա գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը, հարգելով նաև իրավաչափ գաղտնիքի պահպանման ընթացակարգերը.

- օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից տարեկան հաղորդում/զեկույցների ներկայացումը վերահսկող մարմնին.

- վերահսկող մարմնի՝ առնվազն խախտման փաստ արձանագրելու, օրենքի պահանջների խախտմամբ հավաքագրված տվյալների ոչնչացման առաջարկություն/կարգադրություն արձակելու լիազորությունները.

- վերահսկող մարմնին ներկայացված հաշվետվությունների հնարավոր առավելագույն հրապարակայնությունը<sup>113</sup> :

---

<sup>112</sup> Չնայած լավագույն փորձը հիմնավորում է հատկապես անկախ և պրոֆեսիոնալ մարմնի ստեղծման անհրաժեշտությունը, առաջարկը մշակվել է հաշվի առնելով ներկա իրողությունները, նոր մարմնի ձևավորման ժամանակ առկա բարդ շրջափուլում ենթադրվող խոչընդոտները, այդ թվում՝ պետության համար լրացուցիչ ֆինանսական ծախսերի ավելացումը և այլն:

<sup>113</sup> Որպես հիմք կարող է ընդունվել ֆրանսիական մոդելը, որտեղ գործող անկախ հսկողություն իրականացնող մարմինը առանց բացահայտելու հետախուզական ծառայությունների կողմից օգտագործվող գործառնական մեթոդները, հանրությանը պարբերաբար տրամադրում է տեղեկատվություն այն մասին, թե ինչպես են այդ մեթոդները կիրառվում, մասնավորապես դրա տարեկան գործունեության հաշվետվությունները ներառում են.

- տվյալների հավաքագրման մեթոդների կիրառման վերաբերյալ հարցումների քանակը
- այդ հարցումներում նշված նպատակները
- հարցումների վերաբերյալ արված բացասական եզրակացությունների քանակը
- օգտագործող հսկողության տակ գտնվող անձանց քանակը

## ԲԱԺԻՆ 4

### ԱՆՁԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄԸ, ՈՐՊԵՍ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

#### ԱՌԱՆՁԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ<sup>114</sup>

Թեև քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափող անձանց հետախուզումը և հայտնաբերումը, ինչպես նաև անհայտ կորած անձանց հետախուզումը Օրենքում ամրագրված է, որպես դրա հիմնական նպատակներից մեկը<sup>115</sup>, այնուամենայնիվ ո՛չ Օրենքը, ո՛չ գործող Քրեական դատավարության օրենսգիրքը համակարգային կերպով չեն կանոնակարգում անձի նկատմամբ հետախուզում հայտարարելու և այն իրականացնելու կարգը: Այս խնդիրը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման հիմքերը Օրենքով սահմանված չլինելու խնդրի հետ մեկտեղ առաջացնում է անորոշություն անձի հետախուզման շրջանակում իրականացվող գործողությունների, այդ թվում հետախուզման հիմքերի, կիրառման ենթակա օպերատիվ միջոցառումների, հետախուզումն իրականացնող հիմնական մարմնի կողմից այլ մարմինների հետ համագործակցության և հարակից այլ հարցերի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ եվրոպական շատ երկրների օրենսդրական կարգավորումները փաստում են, որ անձանց, այդ թվում քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափող, հետախուզումը փաստացի առանձնացված և ինքնուրույն ուղղություն է, չնայած նրան, որ այն հիմնականում չի սահմանվում որպես առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսակ<sup>116</sup>: Օրենսդրությունը սովորաբար սահմանում է այն հիմնական միջոցառումների ցանկը, որոնք ոստիկանության կամ այլ պատկան մարմինների կողմից իրականացվում են անձին հայտնաբերելու ուղղությամբ, այդ թվում՝ գաղտնի հսկողության միջոցառումները և այլ միջոցները:

#### **Առաջարկ.**

Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել անձի նկատմամբ հետախուզում իրականացնելու իրավական հիմքերը (տարբերակելով քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափող և անհայտ կորած անձանց դեպքերը) և

<sup>114</sup> Խնդիրը բարձրացվել է Ոստիկանության կողմից

<sup>115</sup> Հոդված 4, մաս 1, կետ 3

<sup>116</sup> Լեհաստանում, Չեխիայում, Սլովակիայում, Խորվաթիայում, Ռումինիայում և այլ երկրներում

դրա նպատակները: Միևնույն ժամանակ առաջարկվում է սահմանել հետախուզման շրջանակում այլ մարմինների և կազմակերպությունների հետ (այդ թվում՝ մասնավոր) համագործակցության, այդ թվում տվյալների փոխանակման սկզբունքները և կարգը: